

Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ 13-ՐԴ ՊԱՏՊԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, Նոյեմբերի 8-ին, 2009, Փասատինայի Ս.Դ.Հ.Կ. կեդրոնին մէջ, տեղի ունեցաւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի շրջանի 13-րդ պատգամաւորական ժողովը, մասնակցութեամբ շրջանիս տարբեր մասնաճիւղերու 40 ընկեր-ընկերուհիներու: Պատգամաւորական այս ժողովին ներկայ էին նաեւ Ս.Դ.Հ.Կ. կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեան եւ կուսակցական այլ հիւրեր:

Կուսակցութեան քայլերգի ունկնդրութենէն ետք Պատգամաւորական ժողովը անցաւ իր օրինական աշխատանքին:

Ժողովականներ, այնուհետեւ իրենց աշխոյժ մասնակցութիւնը բերին օրակարգի մէջ նշուած հարցերու քննարկումին, որոնք առաւելաբար կը վերաբերէին ներքին կազմակերպչական, Թուրքիա-Հայաստան համաձայնագիրներուն, ինչպէս նաեւ կուսակցութեանս հովանաւորութեան ներքեւ գործող տարբեր կառոյցներու աշխուժացումին եւ համագաղութային այլ խնդիրներուն: Առաջադրուած բոլոր հարցերը քննարկուեցան կառուցողական եւ համերաշխ սթրատեգիայի մէջ եւ առնուեցան համապատասխան որոշումներ:

Պատգամաւորական ժողովի աւարտին տեղի ունեցաւ նոր Վարիչ Մարմնի ընտրութիւն, հետեւեալ կազմով. Լեւոն Մանուկեան, Խաչիկ Քէշիշեան, Կիրէղ Մանկրեան, Համբիկ Սարաֆեան, Սիիրան Խաչատուրեան, Սուրէն Խոտանեան, Վահէ Աջապահեան, Վազգէն Խոտանեան եւ Վարդան Քէօրողլեան: Ժողովն աւարտեցաւ «Տուր Ձեռքդ Ընկեր» կուսակցական մաղթերգով:

Նորընտիր Վարիչ Մարմինը՝ իր անդրանիկ նիստին, որուն ներկայ էր Պատգամաւորական ժողովի դիւանը, միաձայնութեամբ Վարիչ Մարմնի ատենապետ ընտրեց ընկ. տօքթ. Համբիկ Սարաֆեանը:

Մեր ջերմ շնորհաւորութիւնները նորընտիր վարիչ Մարմնին, մաղթելով օգտաշատ գործունէութիւն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ



Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութիւնը Արամ Ա. Կաթողիկոսի հետ հանդիպումի ընթացքին

Հինգշաբթի 19 Նոյեմբեր 2009-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ. Արամ Ա. Կիլիկիոյ Կաթողիկոսը Անթիլիասի Մայրավանքին մէջ ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնական վարչութեան պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ ընկ. Սեդրակ Աճէմեանի եւ ընկերակցութեամբ երեսփոխան ընկ. Սեպուհ Գալստիսեանի, նախկին երեսփոխան ընկ. տօքթ. Եղիկ Ճէրէճեանի, եւ Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ ընկ. տօքթ. Մարտիկ Ժամկոչեանի:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան Հայ ժողովուրդի կեանքը յուզող զանազան հարցեր, եւ մասնաւորաբար Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու գծով մեր ժողովուրդի կեանքին ներս ստեղծուած իրավիճակը: Վեհափառ Հայրապետը այս ուղղութեամբ իր տեսակէտը պարզելով, շեշտեց Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը, կոչ ուղղելով հեռու մնալ բեւեռացումներէ: Նորին Սրբութիւնը նաեւ կարեւորութեամբ ընդգծեց, որ պահանջատիրական իր պայքարին մէջ մեր ժողովուրդը, ու յատկապէս Սփիւռքը պէտք է շարունակէ իր աննահանջ երթը:

«Այսօրուայ բանակցութիւններուն շատ կարեւոր յառաջընթաց արձանագրուած է», - Միւնիխի մէջ Հայաստանի եւ Ատրպէյճանի գործող նախագահներու միջեւ Կիրակի, Նոյեմբեր 22-ին, տեղի ունեցած բանակցութիւններէն ետք յայտարարած են ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի միջնորդները:

Սարգսեան-Ալիեւ հանդիպումը կապեցած է նախ դէմ առ դէմ, ապա՝ ընդլայնուած կազմով, որուն մասնակցած են երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներ Էդուարդ Նալբանդեանն ու Էլմար Մամեդեարովը, ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ Ռոբերտ Պրատկէ (Միացեալ Նահանգներ), Եուրի Մերզլեակով (Ռուսաստան) ու Պեռնար Փասիէ (Ֆրանսա), ինչպէս նաեւ ԵԱՀԿ նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անճէյ Կասպրչիկ:

Հանդիպումէն առաջ Իլհամ Ալիեւ յայտարարած էր, թէ այն «որոշիչ» պիտի ըլլայ, եւ եթէ արգիւնք չունենայ, Ատրպէյճան

ՍԱՐԳՍԵԱՆ-ԱԼԻԵՒ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԵՆ ԵՏՔ ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ ԿԱՐԵՒՈՐ ՅԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ



Ալիեւ եւ Սարգսեան Նոյեմբեր 22-ի հանդիպման ընթացքին

բանակցութիւնները կը նկատէ սպառնալից եւ կը մտածէ ռազմական ճանապարհով խնդիրը լուծելու մասին:

Պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հաշկական ծառայութեան հարցին՝ թէ ո՞րն է այն ամենակարեւոր հարցը, որու շուրջ յառաջընթաց ձեռք ձգուած է, Ֆրանսացի համանախագահ Պեռնար Փասիէ ըսած է. - «Մենք պայմանաւորուածութիւն ունինք չհրապարակել բանակցութիւններու մանրամասնութիւնները: Այդ մասին պէտք է խօսին իրենք՝ նախագահները: Սակայն մենք համակարծիք ենք այն հարցով, որ այսօրուայ բանակցութիւններուն շատ կարեւոր յառաջընթաց արձանագրուած է»:

Ասուլիսի ընթացքին յայտնի դարձաւ որ, Սերժ Սարգսեան եւ Իլհամ Ալիեւը յանձնարարած են Մինսկի խումբի միջնորդներուն աշխատելու յստակ հարցերու վրայ:

Շաբ.ը էջ 4

ԹՈՒՐԲԻՈՅ ՍԷՋ «ԵՐԳԵՆԵԿՈՆԻ» ՀԱՐՑՈՎ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

«Էրգէնեկոն» անունով ծանօթ դատական գործի հետաքննութեան ընթացքին բացայայտուած է Թուրք քաղաքացի մը, Ֆաթիմա Չենգիզ անունով, որ հաւաքագրուած էր թրքական զինեալ ուժերուն կողմէ, կը հաղորդէ «Today's Zaman» թերթը:

«Էրգէնեկոնը» քեմալական արմատներով թրքական գաղտնի ազգայնական կազմակերպութիւն մըն է, որ կապեր ունեցած է բանակի եւ ապահովական ուժերուն հետ: Կազմակերպութեան անդամները ամբաստանուած են ահաբեկչութեան մէջ:

«Today's Zaman»-ը կը գրէ որ, ձերբակալուած կնոջ պարտականութիւն տրուած էր, մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու թուրքիոյ հայերու մասին: Ցանկը կը ներառէր հայ համայնքի երկրէզու «Ակօս» թերթի բաժանորդները, որու խմբագիր Հրանդ Տինքը սպաննուեցաւ թուրք ազգայնականներու կողմէ: Բացի այդ, ցանկին վրայ եղած են հայկական կազմակերպութիւններու եւ եկեղեցիների անուններ:

Շաբ.ը էջ 4

ՕՐՈՒԱՆ ԸԱՐՑԵՐՈՒՆ ԸՏ ՄԻՆԻԽԵԱՆ ԸԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՒ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՐԿՈՆՏՐԱՆԸ

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Մինսկի խումբի հովանիին տակ, Նոյեմբեր 22-ին Գերմանիոյ Մինիխի քաղաքին մէջ, այս տարուայ ընթացքին 6-րդ անգամ ըլլալով, դարձեալ հանդիպեցան Հայաստանի եւ Ատրպէյճանի գործող նախագահները, դարաբաղեան տագնապին լուծում գտնելու հեռանկարով:

1992 թուականին Եւրոպայի Ապահովութեան ու Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) կողմէ ստեղծուած Մինսկի խումբը միասնաբար կը նախագահեն Ամերիկայի, Ռուսաստանի եւ Ֆրանսայի ներկայացուցիչները, որոնք, անցնող 17 տարիներու ընթացքին, որպէս միջնորդներ բանակցութիւններ կը վարեն Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ու ժամանակ առ ժամանակ առաջարկներ կը ներկայացնեն երկու կողմերուն: Թէեւ, այս տարիներու ընթացքին անոնք չկրցան հասնիլ շօշափելի արդիւնքի, սակայն, խաղաղութեան համար առաջարկուող պայմանները ենթարկուեցան յարատեւ փոփոխութեան, դժբախտաբար միշտ ալ ի վնաս Հայաստանի:

Ժամանակին Լեւոն Տէր-Պետրոսեան ուզեց դարաբաղեան հարցը լուծել նուազագոյն զիջումներ կատարելով, սակայն «պալատական լեզուներով» եկաւ տապալելու այդ ծրագիրը:

Քոչարեան-Օսկանեան գոյգը տասը տարի շարունակ, բանակցութիւնները օգտագործեցին ժամանակ շահելու եւ իրենց իշխանութիւնը պահելու որպէս միջոց: Անոնք յաջողեցան հասնիլ իրենց նպատակին: Սակայն, արդիւնքը եղաւ այն, որ այսօր Հայաստանէն պահանջուածը շատ աւելին է, քան տասը տարի առաջ էր:

Անցեալին եթէ կը խօսուէր, հինգ շրջաններ Ատրպէյճանին վերադարձնելու մասին, ներկայիս պահանջուածը այն է, որ հայկական զօրքերը դուրս քան Արցախի շուրջ գտնուող եօթը շրջաններէն, ներառեալ Լաչինի շրջանէն, որ հայկական երկու հանրապետութիւնները իրար կապող միակ ճանապարհն է, տալով միայն միջանցք մը: Անցեալին, եթէ նկատի կ'առնուէր Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը, այժմ օրակարգի վրայ է միայն Ատրպէյճանի հողային ամբողջականութեան հարցը: Անցեալին, եթէ համաձայնութիւն կար Ղարաբաղի կարգավիճակը ապագայ բանակցութիւններու միջոցաւ լուծելու մասին, ներկայիս կը խօսուի ատրպէյճանցի գաղթականներու Արցախ վերադարձի ու 15 տարի ետք տեղի ունենալիք հանրաքուէի մը մասին, երբ փոխուած կրնայ ըլլալ հայկական տարածքի ժողովրդագրական (տէմոկրաֆիք) պատկերը:

Հայութեան համար բանակցութիւնները խիստ աննպաստ կէտի մը հասցնելէ ետք, Քոչարեան «զնդակը փոխանցեց» Սերժ Սարգսեանին, որ իր կարգին գործեց նոր սխալ մը, պատուհան բանալով Թուրքիոյ առջեւ՝ միջամուտ ըլլալու բանակցութիւններուն, օգտագործելով Հայաստան-Թուրքիա սահմանի բացման

նպատակով ստորագրուած Արձանագրութիւնները:

Տակաւին անցեալ շաբաթ, «Հիւրընդիր» թերթը կը հաղորդէր որ, Թուրքիա «խիստ գաղտնի նամակ» մը յղած է Մինսկի խումբի համանախագահներուն, ուր ըսուած է թէ, Հայաստանի հետ սահմանի բացումը ուղղակիօրէն կապուած է Լեւոնային Ղարաբաղի հարցի լուծման հետ: Այս կապակցութեամբ ներկայացնելով շարք մը առաջարկներ, ան պահանջած է Լեւոնային Ղարաբաղի շուրջ գտնուող «զբաւեալ եօթը շրջաններէն» հայկական զօրքերու դուրս գալը, այդ շրջաններուն մէջ ատրպէյճանցի գաղթականներու վերադարձի իրաւունքի ճանաչումը եւ «միջանկեալ համաձայնագրի» մը ստորագրումը:

Թրքական խորհրդարանէն ներս Արձանագրութիւններու վաւերացման ձգձգումով ու զայն Լեւոնային Ղարաբաղի հարցին կապելով, Թուրքիա ոչ միայն ճնշում կը բանեցնէ Հայաստանի վրայ, այլ նաեւ միջնորդ պետութիւններուն, որոնք եւս շահագրգռուած են այդ սահմանի բացումով, իւրաքանչիւրը հոն հետապնդելով աշխարհաքաղաքական որոշ նպատակներ:

Հետեւաբար, զարմանալի չէ որ, Սարգսեան-Ալիեւ հանդիպումէն ետք, Մինսկի խումբի համանախագահները առաջին անգամ ըլլալով սկսան խօսիլ կարեւոր յառաջընթացի մասին, աւելի եւս ճնշելով Հայաստանի վրայ, որպէսզի արագօրէն ընդունի սեղանի վրայ եղող պայմանները:

Այս իրավիճակին առջեւ, Սերժ Սարգսեան կը գտնուի երկընտրանքի մէջ: Մէկ կողմէն կայ միջազգային ճնշումը եւ սահմանը բաց տեսնելու ցանկութիւնը, իսկ միւս կողմէ՝ իշխանութիւնը պահելու հարցը: Այս իրողութեան դիմաց, Սարգսեան դժուար թէ կարողանայ Մինսկի խումբի համանախագահներու «աւետած» յառաջընթացին հետ համակերպիլ:

Հայ-թրքական արձանագրութիւններու ստորագրման առթիւ, Հայաստանի եւ պիւլուքի տարածքին բարձրացած բողոքի ալիքը իր աչքի առջեւ ունենալով, Սերժ Սարգսեան կրնայ կանխատեսել, թէ ի՞նչ կը սպասէ իրեն, երբ ընդվզումին միանայ նաեւ Արցախը:

Հայաստանի ոեւէ ղեկավար ի վիճակի չէ դարաբաղի հարցի շուրջ միակողմանի զիջումներով պայմանագիր ստորագրել, առանց վտանգելու իր աթոռը: Նման պայմանագրերու շուրջ կրնան բանակցիլ ու համաձայնութեան գալ այն նախագահները, որոնք ընտրուած են իրենց ժողովուրդի կողմէ ու կը վայելեն անոր յենարանը, բան մը որոնցմէ զուրկ է Հայաստանի նախագահը:

Հետեւաբար, Սերժ Սարգսեան եւս, իր նախորդի նման պիտի փորձէ երթալ ձգձգումի եւ ժամանակ շահելու քաղաքականութեան ճանապարհով: Թէ որքանով կը յաջողի իրեն այդ բանը, ցոյց պիտի տան գալիք օրերը:

ԵՐՈՒԱՆԴ ԲՈՋՈՅԵԱՆ. «ԲՀԿ-ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՒՈՒՄ Է ԱՐԴԷՆ ՀՀԿ-ԲՀԿ ՀԱՐԹՈՒԹԻՒՆ»

Հայաստանում վերջին շրջանի քաղաքական գարգացումների մասին NEWS.am-ը գրուցել է քաղաքագետ Երուանդ Բոջոյեանի հետ: Պարոն Բոջոյեան, վերջին շրջանում ԲՀԿ առաջնորդ Գաբրիլ Մառուկեանը ակնյայտօրէն ակտիվացել է (հարցազրույց է տալիս ռուսական լրատուամիջոցներին, ամբացնում է կապերը «Երևանի Թոմաս» կուսակցութեան հետ, կրթամիջոցներ է բաժանում, «Խաչի ասպետ» տիտղոս է ստանում կաթողիկոսից): Ինչպէ՞ս էք դա գնահատում եւ կարելի՞ է այն դիտարկել որպէս արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների պատրաստութիւն:

Իմ տպավորութեամբ, քանի որ ԲՀԿ-ն ունի բաւականին մեծ խմբակցութիւն Աժ-ում, փորձում է ցոյց տալ, որ իր քաղաքական ակտիվութիւնը բաւական մեծ է եւ դրանով ի ցոյց դնել իր քաղաքական կշիռը: Անցած քաղաքային ընտրութիւններում երկրորդ տեղը զբաղեցնելը նա փորձում է կապիտալիզացնել նրանով, որ ունի պատկառելի կշիռ քաղաքական դաշտում: Կարծում էք դա ձեւ է իր ուժը ցոյց տալու, ինչո՞ւ չէ, նաեւ պատրաստուած է ապագայ ընտրութիւններին:

Իսկ այդ ընտրութիւնները հնարաւոր է արտահերթ լինեն:

Եթէ որոշ մարդիկ խօսում են արտահերթ գործընթացների մասին, պէտք է նաեւ հասկանալի լինի, թէ ինչու պէտք է այդ գործընթացները լինեն: Այսինքն նման գարգացումներ լինում են այն ժամանակ, երբ կա մեծ ճնշում իշխանութիւնների վրայ, որն այս պահին չկայ: Եթէ ընդդիմութիւնն այս պահին թույլ է. ինչո՞ւ պէտք է իշխանութիւնը գնա արտահերթ գործընթացների, եւ այդ պատճառը չեմ տեսնում: Ես այդ հարցում մի փոքր յոռետես էք:

Արդեօ՞ք Գ. Մառուկեանի ակտիվութիւնը պայմանաւորուած չէ նրանով, որ նրա ու Սերժ Սարգսեանի միջեւ լուրջ խնդիրներ են առաջ եկել եւ Մառուկեանն իր այս քայլերով փորձում է պաշտպանուել կամ ամբացնել իր դիրքերը:

Ես չեմ բացառում այդ սցենարը, որովհետեւ յատկապէս վերջին շրջանում, թաքնուած հակամարտութիւն է նկատուում ԲՀԿ-ի ու կառավարութեան միջեւ: Երկրի վարչապետը յայտարարում է թէ խոշոր բեզնեսը պէտք է բերել հարկային դաշտ, միւս կողմից ԲՀԿ-ն յայտարարում է, որ փոքր ու միջին բեզնեսը վատ վիճակում է եւ կառավարութիւնը վատ օրէնքներ է ներկայացնում Աժ: Այդ թաքնուած հակամարտութիւնը կառավարութեան ու Ազգային ժողովի, մասնաւորապէս ԲՀԿ-ի միջեւ, կարող է ինչ որ պահի նյարդայնացնել նաեւ Սերժ Սարգսեանին:

Իսկ ինչո՞ւ էք բացատրում, որ քաղաքապետարանում հակասութիւն առաջ եկաւ ՀՀԿ-ի ու ԲՀԿ-ի միջեւ, եւ բանը հասաւ նրան, որ ԲՀԿ-ականները յայտարարեցին, թէ հնարաւոր է վայր դնեն մանդատները:

Եւ կարծում էք, որ դա ԲՀԿ-կառավարութիւն թաքնուած հակամարտութեան շարունակութիւնն է, որը սահուն տեղափոխուած է

արդէն ՀՀԿ-ԲՀԿ հարթութիւն: Ի հարկէ, այսօր ոչ ոք չի ուզում հրապարակաւ շեշտել այդ հակասութիւնների առկայութեան մասին, սակայն քաղաքապետարանում տեղի ունեցած գործընթացները եւս ապացոյց են այն բանի, որ լուրջ խնդիրներ կան եւ Հանրապետականը ուզում է իր ձեռքում կենտրոնացնել բոլոր լծակները, եւ հասնել նրան, որ ապագայ խորհրդարանական ընտրութիւններն ընթանան այնպէս, որ ՀՀԿ-ի դէմ որեւէ խաղ չլինի որեւէ մեկի կողմից:

Գուցէ Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմից Սերժ Սարգսեանին ուղղուած համագործակցութեան վերջին առաջարկից յետոյ Սերժ Սարգսեանին այլեւս ԲՀԿ-ն պէտք է ու դրանով է պայմանաւորուած, որ ԲՀԿ-ից փորձում են ազատուել, յատկապէս, որ ԲՀԿ-ն ընկալուած է որպէս քոչարեանական կուսակցութիւն:

Նախ նշեմ, որ այնպէս չի, որ Լ. Տէր-Պետրոսեանն առաջարկ է անում ու Սերժ Սարգսեանը միանգամից այդ առաջարկն ընդունում է եւ հրաժարում ԲՀԿ-ից: Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջարկը ապացուցում է այն հանգամանքը, որ այս պահին ընդդիմութիւնը բաւականին թույլ վիճակում է: Ընդդիմութեան լիդերը չի հաւատում, որ կը լինեն արտահերթ գործընթացներ եւ նա փորձում է երկարաժամկէտ գործընթացի մէջ պահպանել իր թիմը: Գնահատելով այդ

Շարք էջ 4

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ԱՌՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՍՔԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ

ԽՍՔԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՔՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
3 ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail),
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍԱՆ

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱԿ-Ի «ԼՈՒՐՁ ԱՇԽԱՏԱՆՔԻ» ԵՒ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԻ ԸՆԾՄԱՆ» ՀԵՏԵՒԱՆՔՆ Է

Վարչական դատարանը բա-
լարարեց «Հայկական Ժամանակ»
օրաթերթի գլխավոր խմբագիր Նի-
կոլ Փաշինեանի հայցը ընդդէմ
Ոստիկանութեան անձնագրային եւ
վիզաների վարչութեան:

Դատարանը պարտադրեց իջե-
լանի անձնագրային բաժնին՝ Փա-
շինեանին տրամադրել տեղեկանք
վերջին 5 տարիներին Հայաստա-
նում մշտապէս բնակուելու վերա-
բերեալ:

Յիշեալ տեղեկանքը անհրա-
ժեշտ է Յունուարի 10-ին Երեւանի
թիւ 10 ընտրատարածքում կայա-
նալիք Ազգային ժողովի պատգա-
մաւորի լրացուցիչ ընտրութիւն-
ներում Փաշինեանի թեկնածութեան
զբանցման համար:

Հայ ազգային կոնգրեսի
(ՀԱԿ) համակարգող Լեւոն Զու-
րաբեանը «Ազատութիւն» ռադիո-
կայանի հետ զրոյցում կարծիք
յայտնեց, որ վարչական դատարա-
նի կայացրած վճիռը, յօգուտ
Նիկոլ Փաշինեանի, եղել է «իշխա-
նութիւնների որոշումը»:

«Կարծում էք, ոչ ոք չի կաս-
կածում, որ Հայաստանում, այդ-
ուամենայնիւ, արդար դատարան
գոյութիւն չունի, եւ բոլոր որո-
շումները ընդունուած են քաղաքա-
կան իշխանութեան կողմից, Սերժ
Սարգսեանի կողմից անձամբ: Փաս-
տօրէն իշխանութիւնները ընդու-
նեցին այս անգամ այս որոշումը,
փոխելով իրենց նախնական պլա-
նը», - ասաց Զուրաբեանը, պար-
զաբանելով, թէ դա իրենց քաղա-
քական ուժի «լուրջ աշխատանքի»
է. իշխանութիւնների վրայ «մի-
ջազային կառուցների գործադ-
րած ճնշման» հետեւանքն է:

«Ցեխ սա արուեց, ցոյց տալու,
որ Հայաստանում կա արդար դա-
տական համակարգ, դա անշնորհա-
կալ գործ է», - շարունակեց Զու-
րաբեանը, հիմնաւորելով. - «Այն
խայտառակ դատավարութիւննե-
րից յետոյ, որ Հայաստանում տեղի
ունեցան, երբ անմեղ մարդկանց
դատապարտեցին ազատազրկման ու
հալածանքների, իշխանութիւննե-
րը չեն կարող այդպիսի մի հնար-
քով մաքրել մեր արդարադատու-
թեան գործած մեղքերը»:

Հարցին, թէ կարող է Փաշինե-
անի օգտին կայացուած որոշումը
դիտարկուել որպէս ընդդիմութեան
հետ իշխանութիւնների համագոր-
ծակցութեան պատրաստակամու-
թիւն, Լեւոն Զուրաբեանը պատաս-
խանեց. - «Մեր հաշուով, ես
համարում եմ, որ եթէ իշխանու-
թիւնները գիտակցել են, որ անհ-
րաժեշտ է, այնուամենայնիւ, ապա-
հովել սահմանադրական գործըն-
թացների պատշաճ զարգացումը
թէկուզ եւ փոքր մասշտաբներում,
սա արդէն արդիւնք է մեզ համար:

Բայց շատ դժուար է հասկանալ,
արդեօ՞ք իշխանութիւնների իրա-
կանում ընտրել են այդ տարբերա-
կը»:

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ «ՊԱՐԱՊ ԽՕՍՔ»

ԹԵՐԹ: «Ազ-
գային արժէքները
դարձել են «պարապ
խօսք», իսկ աւանդա-
կան հայ երգը շուտով
կ'արժանանայ Զուղա-
յի խաչքարերի ճա-
կատագրին», - կար-
ծում է հնագոյն
երաժշտութեան «Տա-
ղարան» համոյթի
գեղարուեստական
ղեկավար եւ դիրի-
ժոր Սեդրակ Երկան-
եանը: Երաժիշտը ցա-
ւում է, որ անգամ
«Տաղարան» համոյթի
պետկոնսերվատոր-
իայում այսօր երգի
կոմիտասեան չափանիշները չեն
սովորեցնում եւ բաւարարում են
«լաւագոյն դէպքում օպերային
երգիչ պատրաստելով»:



Սեդրակ Երկանեանը պատմեց,
որ այսօր իր գլխավորած հնագոյն
երաժշտութեան «Տաղարան» հա-
մոյթը ոչ միայն չի վայելում պե-
տութեան հովանաւորութիւնը, այլ
որեւէ առաջարկով ու աջակցու-
թեան յայտով այլեւս չի փորձում
դիմել նախարարութիւն, քանի որ
բազմիցս լսել են, որ «գումար
ճարէք՝ ինչպէս կարող էք»:


Գանահասարի կրթութեամբ
եւ այսօր արդէն հոգեւոր երաժշտու-
թեամբ զբաղւող քիչ երաժիշտնե-
րից մէկը մեծ ոգեւորութեամբ է
յիշում խորհրդային տարիները, երբ
մուտք ունէին հեռուստաթեր, կա-
րող էին ազատօրէն ձայնագրու-

թիւններ կատարել, ինչն այսօր
հնարաւոր է միայն մեծ գումարների
առկայութեան դէպքում: Իրենք հի-
մա կարողանում են միայն սեփական
միջոցներով տեսագրել համերգնե-
րը: Իսկ վերջին ձայնասկաւառակ
թողարկել են շատ տարիներ առաջ:

Սեդրակ Երկանեանը պատմեց,
որ «Տաղարան»-ի՝ 1990թ-ին մոս-
կովեան «Մելոդիա» ստուդիայում
ձայնագրուած սկաւառակն առաջինն
էր Հայաստանի պատմութեան մէջ:
Այսօր Սեդրակ Երկանեանի
հեղինակած վոկալ խորեոգրաֆի-
ան՝ նուիրուած Նահապետ Քուշա-
կին, մնում է թղթի վրայ, հնարա-
ւորութեան դէպքում կը ցանկանար
ձայնագրել հորովանների շարքը,
որ հաւաքել է Հայաստանի տարբեր
մարզերում ու նպատակ ունի կազ-
մել հորովանների քարտէզ:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿՏՐԻ՞ «ԱՅՆ ԵՒՐԸ, ՈՐԻ ԿՐԱՅ ՆՍՏԱԾ Է»

«ԱՅՍՕՐ» «Ընդհանրապէս,
աննորմալ էք համարում, երբ երկրի
նախագահը, վարչապետը կամ ԱԺ
նախագահը լինում են անկուսակցա-
կան, որովհետեւ երկրի բարձրաս-
տիճան քաղաքական պաշտօնեանե-
րը պէտք է պատկանեն կոնկրետ
քաղաքական ուժի, որպէսզի յետոյ
պատասխանատուութիւն կրեն», -
յայտարարեց «Հանրապետութիւն»
կուսակցութեան քաղխորհրդի ան-
դամ Սուրէն Սուրէնեանցը:



«Հանրապետութիւն»
կուսակցութեան անդամ Սուրէն
Սուրէնեանց

Խօսքը Տիգրան Սարգսեանի՝
ՀՀ շարքերն անդամակցելու մասին
է, սակայն Սուրէնեանցը համոզ-
մունք յայտնեց, թէ քաղաքական
պատկանելութիւնը պէտք է որոշուի
արժէքային համակարգի, գաղա-
փարների հիման վրայ, ոչ թէ իրադ-
րութեան թելադրանքով:

Ըստ նրա, ՀՀ ընտրութիւնը
պայմանաւորուած է տնտեսական
ճգնաժամի, կառավարութեան ոչ
արդիւնաւէտ գործունէութեան հե-
տեւանքով: «Այդ ամէնը հասցրել
էին նրան, որ վարչապետի դիրքերն
էպէս սասանուեն, ուստի վարչա-
պետը փորձեց իր պաշտօնի պահպա-
նումը երաշխաւորող քաղաքական
տանիք փնտռել»:

Սուրէնեանցը նաեւ վստահ է,
որ Սերժ Սարգսեանը որոշել է
քաղաքական նոր թիմ ստեղծել, եւ
այդ գործընթացում էական դերա-
կատարութիւն վերապահել Տիգրան
Սարգսեանին:

«Իշխանութեան ներսում տեղի
են ունենում ակտիւ վերադասաւո-

ԵՐԵՒԱՆԻ ԱՒԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ԲԱԽՈՒՄ ԵՆ ՀՀ-Ի ԵՒ «ԲԱՐԳԱՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ԽՍԲԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երեւանի աւագանու նիստում
կայացուած որոշումը, փոփոխութիւն-
ներ կատարել աւագանու գործունէու-
թեան կանոնակարգում, ըստ որի
նիստերում քուրում ապահովելու հա-
մար բաւարար է աւագանու 17 ան-
դամների ներկայութիւնը՝ նախկի-
նում 33-ի փոխառէն, չարուցել է
աւագանում «Բարգաւած Հայաստան»
խմբակցութեան դժգոհութիւնը:

«Եթէ մենք ունենք 65 ընտր-
ուած աւագանի, որոնցից մեծամաս-
ամբ 50 հոգին ներկայ են լինում,
ո՞րն է դրա ինդիքը: Եթէ յայտնող
չկայ որեւէ քաղաքական միտում,
աւագանու դերը իջեցնելու կամ
որոշակի ներքին խնդիրներ, մեզ
համար սա սկզբունքօրէն հարց է,
որի ընդունման դէպքում մեզ հա-
մար անընդունելի է մեր հետագայ,
նոյն հունով աշխատանքը», - ասաց
«Բարգաւած Հայաստան» խմբակ-
ցութեան ղեկավար Արման Վար-
դանեանը:

Այս յայտարարութեանը քա-
ղաքապետ Գագիկ Բեգլարեանը ար-
ձագանգեց, թէ որոշումը լիովին
համապատասխանում է «Երեւանի
աւագանու մասին» օրէնքի տառին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԵՆ ՈՐԱԿԵԱԼ ԿԱԴՐԵՐ ՕՍՄԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»

Հայ-թուրքական Արձանագրութիւնների վաւերացման դէպքում
ստեղծուելու է գիտութեան եւ կրթութեան գծով համատեղ
ենթադասնաժողով, որը մանրակրկիտ կերպով քննարկելու է կրթութեան
ոլորտում կապերին առնչուող համապատասխան հարցերը: Այս մասին
Մոսկուայում Հայաստանի դեսպանատանը Ռուսաստանի հայ
երիտասարդութեան ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ
յայտարարել է Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն
Աշոտեանը, հաղորդում է Ռուսաստանի հայերի միութիւնը:

Նա ընդգծել է, որ այսօր Հայաստանին անհրաժեշտ են
օսմանագիտութեան ոլորտի երիտասարդ եւ որակեալ մասնագէտներ:

րումներ: Եւ Տ. Սարգսեանի հանրա-
պետականացումը, վերջին ելույթը
բիւջետային քննարկման ընթացքում,
եւ օլիգարխների մասին բարձրաձայ-
նելը նրանից էր, որ նա ցանկանում էր
քաղաքական նոր դիրք ստեղծել իր
համար»,- ասաց բանախօսը:

Նշենք, որ ԱԺ-ում բիւջետա-
յին քննարկմանը ՀՀ վարչապետը
յայտարարել էր, թէ պէտք է պաշտ-
րել օլիգարխիկ համակարգի դէմ, եւ
Սուրէնեանցը նկատեց, որ եթէ իս-
կապէս պէտք է օլիգարխիայի դէմ
պայքարել, ապա պէտք է փոխուի
ՀՀ ողջ ղեկավար կազմը:

«Բայց խիստ կասկածում եմ,
թէ իշխանութիւնը կտրի այն ճիւղը,
որի վրայ նստած է», - ասաց Սուրէն
Սուրէնեանցը:

ԼՈՒՐԵՐ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին շաբաթ օրը փոխանցեց Սահմանադրական դատարանի խօսնակ Յովհաննէս Պապիկեանը, Սահմանադրական դատարան (ՄԴ) է ներկայացրել Հոկտեմբերի 10-ին Ձիւրիխում ստորագրուած հայ-թուրքական արձանագրութիւնները երկու երկրների միջեւ երկկողմ յարաբերութիւնների զարգացման եւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին, քննելու դրանց համապատասխանութիւնը Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեանը:

Պապիկեանը տեղեկացրեց նաեւ, որ ըստ ընթացակարգի, 20 օրուայ ընթացքում ՄԴ-ի նախագահը կը հրաւիրի աշխատանքային նիստ, որի ընթացքում կ'որոշուի արձանագրութիւնների քննարկման օրը եւ կը նշանակուի գեկուցող դատաւոր:

Արձանագրութիւնները քննարկումը բաց է լինելու:

ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՇՈՒՐՁ ԿԱՐՈՂ Է ԲԱՆԱԿՑԵԼ ՄԻԱՅՆ ԼՂՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Անընդունելի է փաստը, որ Միւնխենում Սերժ Սարգսեանն ու Իլհամ Ալիեւը քննարկել են ազատագրուած տարածքների յանձնման հարցը, եւ ընդամէնը Լաչինի միջանցքի մասին է խօսուել, լրագրողներին ասել է ԱԺ պատգամաւոր, «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչութեան նախագահ Արմէն Մարտիրոսեանը: Ըստ նրա՝ հայ-թուրքական յարաբերութիւններում որոշակի առաջընթաց կը լինի, որից յետոյ է նոր միայն հնարաւոր դարաբաղեան հարցում փաստաթղթի ստորագրումը: «Մենք կարծում ենք, որ Լեւոնային Ղարաբաղի տարածքների հետ կապուած կարող են բանակցել Լեւոնային Ղարաբաղի օրինական ընտրուած իշխանութիւնները, եւ միայն նրանք են, որ սահմանազատման հետ կապուած հարցեր կ'որոշեն», յայտարարել է Արմէն

Մարտիրոսեանը՝ յաւելելով, որ դէմ են իսողապաճ ուժերի տեղակայմանը, միջազգային երաշխիքներին, քանի որ մէկ անգամ էլ, որ նման դէպքերում տեղի են ունեցել գինուած բախումներ:

Արմէն Մարտիրոսեանը, անդրադարձնալով խօսակցութիւններին, թէ ԲՀԿ-ն ՀՀԿ-ի հետ ունեցած տարածայնութիւններից յետոյ պատրաստուած է Երեւանի քաղաքապետարանի աւագանիում վայր դնել իր մանդատները, նշեց, որ այդ քայլն անհնար է: Ըստ նրա, եթէ ԲՀԿ-ն վայր դնի իր մանդատները Երեւանի քաղաքապետարանում, ապա քաղաքական տրամաբանութիւնից ելնելով՝ պէտք է նաեւ դուրս գա կառավարող կուլիցիայից: «ԲՀԿ-ն միշտ եղել է իշխանութեան դաշտում եւ այսօր դժուար թէ անցնի ընդդիմութեան դաշտ», ասաց նա:

ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Շաբուճակուած էջ 1-էն

դեցիները անդամներու անունները, որոնք որակուած են որպէս՝ «ակտիւ» կամ «ոչ ակտիւ» անհատներ: Ցանկի վրայ եղած է նաեւ «Ակօսի» դրամական հաշիւները: Ֆաթիմա Չենգիզ ուշադրութեան արժանացած է, երբ ազգային ոստիկանութեան յատուկ գործողութիւններու բաժինի ղեկավարի տեղակալ Իպրահիմ Սահինի հարցաքննութեան ժամանակ, ան տեղեկութիւններ տրամադրած է S-1 եւ S-2 խումբերու ստեղծման մասին, որոնց նպատակն էր սպաննել թուրքերոյ հայ համայնքի մտաւորական առաջնորդներուն:

Կը տեղեկացուի որ, Չենգիզի ցուցակին վրայ եղած են անունները թուրք ակադեմիկոսներու, գրողներու եւ լրագրողներու, որոնք մասնակցած են «Հայերը Օսմանեան կայսրութեան մէջ, անոր մայրամուտի ժամանակ. Գիտական պատասխանատուութեան եւ ժողովրդավարութեան հարցեր» խորհրդաժողովին:

2005-ին «Պիլճի» համալսարանէն ներս կայացած սոյն խորհրդաժողովի ընթացքին, բաց քննարկում տեղի ունեցած էր Օսմանեան կայսրութեան մէջ հայերու զանգուածային սպանութիւններու մասին:

Թերթը կը տեղեկացնէ որ, ցուցակի վրայ էին նաեւ բազմաթիւ յայտնի թուրք գործիչներ, որոնց շարքին՝ Փրոֆ. Հայիլ Պեթթայ, որ հրապարակային յայտարարած էր Հայոց ցեղասպանութեան մասին, «Թաքնուած հայ» Քազիմ Աքինչի, որ Հրանդ Տինքի սպանութենէն հետ դիմած էր դատարան, որպէսզի իրեն թոյլ տրուի փոխել կրօնը, եւ ուրիշ բազմաթիւ ճանչցուած թուրքեր:

Հետաքննութիւնը բացառուած է նաեւ ծրագիր մը, ուր լիշուած են Իպրահիմ Սահինի, գինեալ ուժերու յատուկ գործողութիւններու նախկին սպայ Կորկուտ էկենի եւ թրքական բանակի նախկին գերագոյն հրամանատար Եաշար Պիւքանըթի անունները: Անոնց անուններու կողքին եղած է՝ «ամէն ինչ երկրի համար» մակագրութիւնը, որ գրուած է արիւնով:

ԲՀԿ-ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Շաբուճակուած էջ 2-էն

թուլութիւնը Սերժ Սարգսեանն էլ աւելի է ամրապնդում իր դիրքերը եւ համաձայն էք, որ այդ իմաստով, ԲՀԿ-ի գործունէութիւնից կախուածութիւնը փոքրանում է: Դա հաշուի առնելով, շատ տրամաբանական ու բնական է, որ Սերժ Սարգսեանը կը ցանկանայ աւելի դոմինանտ դեր կատարել իշխանական համակարգում:

ԸՍՏ Վ. ՇԻՐԽԱՆԵԱՆԻ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԶԻ ԳՆԱՅ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆԸ

-Դա հերթական հանդիպում է,- գնահատելով Նոյեմբերի 22-ին Միւնխենում կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը, «7օր»-ին ասել է Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեանը,- իսկ ադրբեջանական հիստորիան պէտք է ընդունել որպէս այդպիսին, քանի որ դա միշտ եղել է, ուզեցե՛ք յայտարարութիւններ, թէ սա վերջինն է, սրանից յետոյ այլեւս չգիտես ինչ է լինելու: Դրանք ներքին օգտագործման, հիստորիկ յայտարարութիւններ են:

Դրա փոխարէն վ. Շիրխանեանին աւելի է անհանգստացնում Դեկտեմբերի 2-ին Աթէնքում կայանալիք ԵԱՀԿ նախարարների խորհրդի նիստը, որտեղ քննարկուելու է Լեւոնային Ղարաբաղի ինդիքը, եւ որտեղ կարող է որոշուի կայացուել՝ հիմնուելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համախառնագների գեկուցումների վրայ: Իսկ այն, որ հայկական կողմը միջազգային ճնշման ներքոյ կարող է համաձայնել շրջանակային պայմանագրի ստորագրմանը, ՄԴՀԿ անդամը քիչ հաւանական է համարում, քանի որ կարծում է, որ Հայաստանի իշխանութիւնն այդ քայլին չի դի-

մի՝ առաջին հերթին Արցախի ժողովրդի հակադեմոկրատիան աչքի առաջ ունենալով.

-Այսօր դեռեւս այդքան չի գզացուած կոնկրետ վերաբերմունքը՝ Արցախի ազատագրուած տարածքները յանձնելու հետ կապուած: Երբ դա դառնայ փաստ եւ սկսուի իրագործուել, այլ իրավիճակ է լինելու, եւ իշխանութիւնը դա շատ լաւ է պատկերացնում:

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ու հայ-թուրքական յարաբերութիւնների փոխկապակցուածութիւնն էլ, ըստ վ. Շիրխանեանի, Ցիւրիխից յետոյ բացառապէս նաեւ Միւնխենում:

-Թուրքիային բոլորովին ձեռնտու չէ կորցնել Ադրբեջանը՝ Հայաստանի սահմանը բացելու հետեւեակարող,- կարծիք է յայտնել վ. Շիրխանեանը:- Հայաստանի սահմանի բացման հետ կապուած, թուրքիան, իհարկէ, ունի նաեւ այլ շահեր եւ ունի արտաքին ճնշում, որովհետեւ հայ-թուրքական սահմանի բացումն անհրաժեշտ է ոչ միայն թուրքիային, այլեւ առաջին հերթին նրան ճնշողներին: Բայց կարծում եմ, որ թուրքիան աւելի շուտ կը գնայ Ադրբեջանի հետ իր յարաբերութիւնները պահպանելուն, քան այդ ճնշումներին ենթարկուելուն:

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱԳՈՅԻ ԽՄԲԻՆ

Նոյեմբերի 20-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն ընդունել է Եւրոպայի Խորհրդի մոնիտորինգի Ագոյի խմբի ներկայացուցիչներին, ԵՄ-ում Ռուսիաի դեսպան Ստեփան Ստոեանի ղլխավորութեամբ:

Լիբիլ է Հայաստանում ժողովրդավարութեան վիճակի, ԵՄ անդամակցելուց առաջ Հայաստանի կողմից ստանձնած պարտաւորութիւնների կատարման, մասնաւորապէս քաղաքականութեան, խօսքի, լրատուամիջոցների ազատութեան, ԵՄԽՎ-ի վերջին բանաձեւերի իրականացման գործընթացի վրայ: Քննարկուել են Հայաստանում կոռուպցիայի տարածման, դրա յաղթահարման ուղիները, Հայաստանում տնտեսական համակարգի եւ ճգնաժամի նախադէպը չունեցող խորութեան պատճառները:

Հանդիպմանը մասնակցել են Լեւոն Չուրաբեանը եւ Աւետիս Աւագեանը:

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի մամուլի ծառայութիւնից NEWS.am-ին յայտնում են, որ գրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ թուրքիայի միջեւ յարաբերութիւնների ներկայ փուլը եւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման շուրջ վերջին զարգացումները:

ՀՀ առաջին նախագահը ԵՄ դեսպանների ուշադրութիւնը հրա-

ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԸ

Շաբուճակուած էջ 1-էն

Ասուլիսի ընթացքին համա-նախագահները գնահատական տուած են նաեւ Ատրպէյճանի նախագահի վերջին յայտարարութեան: «Պատերազմը ոչ մէկ պարագային չի կրնար այլընտրանք ըլլալ», - յայտարարած է Ֆասիլ ու աւելցուցած. - «Մենք ըսած ենք նախագահներուն շատ ուժեղ եւ յստակ կերպով, որ Մոսկուայի, Փարիզի եւ Ռուսիայի վերջին մեր կառավարութիւնները այն կարծիքին են, որ պատերազմը այլընտրանք չէ, քանի որ այն չի կրնար լուծուի ապահովել»:

Նոյն հարցի շուրջ ուսուստանցի համաձայնագրի ԵՄ Մերզլեակով ըսած է, թէ այս կամ այն յայտարարութիւնը կրնայ պայմանաւորուած ըլլալ ներքաղաքական կեանքի հանգամանքներով:

«Մենք ըսած ենք նախագահներուն, որ բանակցութիւններու այս նուրբ պահուն աւելի լաւ է ձեռնպահ մնալ իրար հանդէպ ծայրայեղ մեղադրանքներ հնչեցնելէ,

առաւել եւս՝ ուժային լուծման հաւանականութեան մասին», - ըսած է ԵՄ Մերզլեակով, յոյս յայտնելով, որ կողմերը նկատի կ'առնեն համաձայնագրից երկիրներու այս դիրքորոշումը:

Միւս կողմէ, «Euronews» կը տեղեկացնէ որ, Սարգսեան եւ Ալիեւ բանակցած են Ղարաբաղի վերաբերեալ շրջանակային պայմանագրի մը շուրջ:

Կողմերը քննարկած են Ղարաբաղի վերաբերեալ շրջանակային պայմանագրի հարցը, որ հետագային հիմք պիտի հանդիսանայ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հիմնարար փաստաթուղթի ստորագրման համար: Քննարկուող փաստաթուղթի համաձայն, հայկական կողմը իր վերահսկողութեան տակ գտնուող տարածքներէն դուրս պիտի բերէ իր գործերը, վերահսկելով միայն Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ ցամաքային եւ միջանցքի, իսկ Լեւոնային Ղարաբաղի կարգավիճակը պիտի որոշուի հանրաքուէի միջոցով:

ԱՂՁԱՅԻՆ

ԲՈՌԻՆՑՔԸ ԵՒ ՅԻՆՊ ՄԱՏՆԵՐԸ

ՄԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

Հայաստանի ներկայ իշխանությունների քաղաքական քայլերն անհրաժեշտ է հայտարարել որ ռազմավարական ու մարտավարական որոշումները հետ – այն չափով որ կը հասկանան, կամ չեն հասկանար, այդ խնդիրները: Այս գործընթացին դուրս կը մնան այն բոլոր խմբավորումները որոնք կը նախընտրեն ստրկամտորեն ընդունել իշխանությունները եւ հետեւել անոնց եւ թակակց ու ժայիւն կառուցներու ամէն տեսակի հակաժողովրդական հրահանգներուն – կառավարական մարմիններէ ներս գրպանի «խելօք» կուսակցութիւններու եւ կէս-կուսակցութիւններու անձանց կամակատար ներկայացուցիչները, անոնց անուանական հլու պատգամները: Ազգային ժողովի խումբարահի փարթամ աթոռներուն բազմած, երկրի եւ ամբողջ հայութեան հարստութեան թալանի կազմակերպիչ օլիգարխներու համադաշնութիւնը, էջմիածնի կաթողիկոսութիւնը, հանրութեան ու հասարակութեան հետ միայն արհամարհանքի եւ անտարբերութեան զգացումներով կապուած Հանրային Խորհուրդի փքուն փուլիկները, անարգ բռնատիրութեան նուաստացման սակարաններուն մէջ իրենց հոգեմտաւոր դրամազուլին ու խիղճը երկու կտոր արծաթով փոխանակած գլխակոր մտաւորականները: Իրենց գնով լուծեամբ կամ ծախու աղմկարարութեամբ, հայրենակերտման դժուարին երթի հանգամանակում անոնց ծուարած այս երանկիները միայն կ'ապակեն մթնոլորտը, դրական ոչ մէկ ներդրում կը բերեն հիմնահարցերու բարուք լուծման, այլ միայն կը խոչընդոտեն ժողովուրդի ազատագրումը անարգ բռնակալներու տիրապետութենէն: Անոնց բոլորին անխնայ դիմակազերծումը անհրաժեշտ է՝ եթէ կ'ուզենք ժողովուրդի գիտակցութենէն արմատախիւ ընել նմանատիպ խրտուխլակները, որոնք իրենց ստեղծած ժխտով միայն կը շփոթեցնեն պարկեշտ քաղաքացիները եւ իշխանութեան օգտին կ'ապակողորոշեն բազմութիւնները:

Մնացեալ ափ մը բախտախնդիր «քաղաքագէտները», ու ժայիւն կառուցներու շարքայիններու հայրենասիրական կարգապահութեան եւ անոնց սակաւթիւ հրամանա-

տարներու նիւթական գոհացման ապաւինելով, որեւէ պարտաւորութիւն չեն զգար իրենց երկրի եւ ժողովուրդի բարօրութեան համար: Հայաստանի պետական շահերուն սատարող դրական կամ հայրենասիրական որեւէ ինքնեկ նախաձեռնութիւններու նախանձախնդիր կամ ատակ չեն անոնք: Ընդհակառակը, առանց ճշմարիտ խղճահարութեան, առանց նոյնիսկ գիտակցելու իրենց արարքի իսկական տարողութեան, առանց խորապէս կանխատեսելու թէ այնքան թէթեւամտութեամբ իրենց առած որոշումները ինչ լըջագոյն անդրադարձներ կ'ընեն ունենալ տասը միլիոն հայութեան կեանքին ու գոյութեան վրայ, անոնք իրապաշտ քաղաքականութեան շլացուցիչ կարգախօսներու բեմականացմամբ ծախելու վրայ են բազմահարկ թէ կարգ մը ձախողած կամ դաւաճանութիւն գործած արքաներ եւ բանակալին պետեր նախընտրած են ինքնապաշտութիւնը: Ըստ երեւոյթի Սերժ Սարգսեան եւս ինքնապաշտութեան խնդիր մը կը դիմագրաւէ – սակայն այս պարագային բուն տուժող պիտի ըլլայ հայ ժողովուրդը, հայ պետականութիւնը, եւ ոչ թէ ինք որպէս պատասխանատու:

Համայն հայութեան համար չափազանց լուրջ է Հայաստանի ներկայ արկածախնդիր իշխանութեան հանդէպ սպասողական, կրաւորական կամ հաճոյակատար քաղաքականութեան շուտով յառաջացնելիք համազգային վտանգը: Ընդդիմութեան եւ իշխանութեան համար հաւասարապէս մտահոգիչ են զգայագրկող լճացման եւ մահացու արկածաքամութեան համայնակուլ սպառնալիքները: Ասիկա կը նշանակէ թէ, տիրող ծանրակշիռ պայմաններու գերագոյն հրամայականով, ընդդիմութիւնը կոչուած է ըլլալու հակակշիռող գլխաւոր ուժը՝ ընդդէմ անպատասխանատու պետականութեան: Հայրենիքը սահմանադրականօրէն, իրաւականօրէն ու ժառանգականօրէն կը պատկանի ոչ թէ ափ մը զաւթիչներուն ու չարաշահող հարստապետներուն, այլ հոն բնակող, մաքառող եւ իրենց կեանքով զայն պաշտպանող բոլոր քաղաքացիներուն: Հայաստանը նաեւ կը պատկանի բոլոր հայերուն, որոնք ցեղասպանութեամբ ու բռնի աքսորով տեղահանուած են իրենց պապենական հողերէն, կոտորուած են ու կոտորակուած, ապա բռտութեամբ հեռացուած են իրենց բազմահարգարամեայ հայրենիքէն ու

խլեակներու նման աշխարհացրիւ շարտուած՝ աննախընթաց վայրաբազմութեամբ:

Պէտք է թույլատրուի որ քաղաքական ներքին հակասութիւնները այնքան արիւնքամեծ հայ պետականութիւնը որ թուրքիան, Ատրպէյճանն ու մեծ պետութիւնները համարձակին միասնաբար յօշոտել զայն՝ իրենց պետական շահերուն ի խնդիր: Պէտք է քաղաքական մթնոլորտը ա՛յն աստիճան սրի ու թունաւորուի որ ընդդիմութիւնը ստիպուի արդար վերաբերում պահանջել օտար պետութիւններու կամ դատարաններու միջնորդութեամբ եւ ո՛չ հայրենի արդարադատ կառույցներու մօտ, իսկ իշխանութիւնն ալ ստիպուի իր օրինականութիւնն ու վարկը փնտռել արտասահմանի մէջ եւ ո՛չ սեփական ժողովուրդի կողմէ: Հակառակ պարագային, անհարկի կորուստներ կ'արձանագրեն ընդդիմութիւնն ու իշխանութիւնը հաւասարապէս: Միակ շահողները կ'ըլլան թշնամիներն ու օտար միջնորդները:

Որպէսզի Արձանագրութիւններու վաւերացման եւ Արցախի կարգավիճակի առնչութեամբ լաւելեալ գիշումներու հարկադրանքին տակ աւելի չտարուի անձնատուութեան աւազախրութիւն մէջ, Սերժ Սարգսեան թերեւս իր ներազգային ու միջազգային վարկը բարելաւէ՝ եթէ լարուած պարանը քշիկ մը թուլցնեն իրեն հակառակորդ կուսակցութիւնները, կազմակերպութիւններն ու հասանքները: Նման թուլացում այդքան ալ հեշտ է: Իշխանութիւնները մինչեւ այսօր դեռ կը շարունակեն արհամարհել ներքին համերաշխութեան բոլոր կոչերը՝ ներքաղաքական ընդդիմադիր ուժերուն կողմէ: Ինքը, Սերժ Սարգսեանը, բիրտ ուժի անտեղի եւ անարդար օգտագործմամբ պատին քամած է իր գրեթէ բոլոր քաղաքական հակաակորդները, ապօրինաբար դեռ կը պահէ կարեւոր թիւով քաղաքատարկեալներ որպէս ճնշումի ձեռնտու պատանդներ, առանց նկատի առնելու որ անոնց այլախոհութիւնը գոտ սկզբունքային է, գերծ՝ քրէական որեւէ բիծէ: Այսուհանդերձ, եթէ անոնց պնդումները ճշմարիտ են, այսինքն եթէ իրենց գերագոյն մտահոգութիւնը հայոց գերագոյն շահերու հետապնդումն է, ապա ըստ այնմ պէտք է փոխակերպուի անոնց փոխադարձ վերաբերմունքը: Ուրեմն իշխանութիւն եւ ընդդիմութիւն, իրենց բոլոր անդամներով ու կառուցներով, քաղաքա-

Մար. ք էջ 19



Blue Cross of California
Authorized Agent



Blue Shield of California
Authorized Agent

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585

BMaronian@AOL.com

FAX **500-9308** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205



ԵՐԲԵՔ ՈՒՅ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՉՍԵՐՈՒԿՈՒՄ. ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՖՈՆԻ ԿՐԱՅ

ԱՐԻՍՂԱԶԻՆԵԱՆԻ
armenianow.com

Դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու հայ-թրքական արձանագրութիւնները ստորագրուեցին Մերձաւոր Արեւելքում սկզբունքորէն նոր քաղաքական պայմաններում:

Նոր իրավիճակի առանձնայատկութիւնն այն է, որ վերջին 100 տարուայ ընթացքում առաջին անգամ թուրքիան փորձում է ներկայանալ որպէս դեկավարող օղակ ոչ միայն ու ոչ այնքան թուրանական, որքան իսլամական աշխարհում: Ընդ որում՝ թուրքիայի իշխանութիւնները նոր քաղաքականութիւնն աջակցութիւն է ստանում բազմաթիւ մահմետական պետութիւնների կողմից՝ միաժամանակ յարուցելով թուրքիայի աւանդական տարածաշրջանային դաշնակցի՝ Իսրայէլի դաշնակցութիւնը:

Տարածաշրջանում պարադոքսալ իրավիճակ է տիրում:

Այսօր թուրքիան և թիւրքիան անբաժան ընկերներ են, իսկ թուրքիան եւ իսրայէլը՝ անհաշտ թշնամիներ: Դեռ մի քանի տարի առաջ քննարկ կարող էին կանխատեսել նման բան:

Փոփոխութիւններն սկսուեցին 2007 թ. անցկացուած խորհրդարանական ընտրութիւններում թուրքիայի իսլամական ուժերի սենացիոն յաղթանակով: Այդ ընտրութիւնների արդիւնքում երկրի իշխանութիւնը կենտրոնացել է իսլամիստ-ընկերների՝ վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրտողանի եւ նախագահ Աբդուլլահ Գիւլի ձեռքում:

Հենց այդ տանդեմը եւ սկսեց փոխել քաղաքական կուրսը, որի հայրերը նախ՝ երիտթուրքերն էին (1908 թ.-ից), աւելի ուշ՝ հանրապետական աշխարհիկ թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը:

2007 թ. շատ քաղաքագէտներ կանխատեսում էին թուրքիայում հերթական գինուած յեղաշրջման անխուսափելիութիւնը: Նման սցենարն աւանդական է այս երկրի նորագոյն պատմութեան համար, երբ բարձրաստիճան սպայակազմը միջամտում է երկրի ներքին կեանքին հենց իրական սպառնալիքների առաջացման շրջանում, որոնք կարող են խարխիւլ պետականութեան հիմքերը եւ Քեմալ Աթաթուրքի հուշակած սկզբունքները: Սակայն, հինգերորդ յեղաշրջում թուրքիայում տեղի չունեցաւ:

Այդուամենայնիւ, գլխաւոր շտաբի ներկայացուցիչները ներկայ չեն եղել Աբդուլլահ Գիւլի երզմնակալութեան արարողութեանը, ամպիոն բարձրանալով նախագահին պատիւ չեն տուել:

«Մենք ուշադիր կը հետեւենք Գիւլի իւրաքանչիւր քայլին, - նախագգուշացրել է Հանրապետական ժողովրդական կուսակցութեան փոխնախագահ Մուստաֆա Օզիւրեկը: - Մենք կը վերահսկենք նրա հաւատարմութիւնը հանրապետութեանը»:

Այս իրողութիւններից ելնելով՝ որոշ քաղաքագէտներ դեռեւս չեն բացառում գլխաւոր շտաբի միջամտութիւնը եւ հերթական գինուած յեղաշրջման հնարաւորութիւնը:

Երբ Հայաստանի իշխանութիւնները փորձում են համոզել

իրենց ժողովրդին, որ Հոկտեմբերի 10-ին ստորագրուած ցիւրիխեան արձանագրութիւնները նոյն զգացմունքներն են առաջացրել թուրքիայում եւ Հայաստանում, դա իրականում ճշմարտութիւն է:

Թուրքիայի արձագանքը արձանագրութիւններին, նախեաւաջ, քաղաքական դաշտի երկու բեւեռների միջեւ հակամարտութեան հետեւանք է, իսկ անհաշտ զգացմունքների դրսեւորման ամենայարմար մեխանիզմը ազգային հարցն է:

Դրա վկայութիւնը թուրքիայի խորհրդարանում քրտական հարցի քննարկման ընթացքում ծեծկոտուքն էր: Երկրի իշխանութիւնները լսումներն անցկացրին Նոյեմբերի 10-ին՝ Մուսթաֆա Քեմալի մահուան հերթական տարեւիցի օրը, ինչն արդէն սաղորիչ քայլ էր: Ընդդիմադիր պատգամաւորները նիստերի դահլիճ էին եկել ցուցապատաւներով, քննարկումները վերածելով ցոյցի, կտրուկ հակադարձում էին ելույթ ունեցողներին՝ նախ լեզուակուռի մէջ մտնելով, ապա ծեծկոտուք սարքելով:

Քեմալիստների պատառններին գրուած էր. «Մեր Աթաթուրք, կը պաշտպանենք քո թողած ժառանգութիւնը», «Հանրապետութիւնը ստեղծել ես դու, իսկ մենք այն կը պաշտպանենք», «Գնում ենք Աթաթուրքի հետքերով» եւ այլն:

«Թուրքիայի ներկայիս իշխանութիւնները երբեք չեն ընդունի Հայոց Յեղասպանութիւնը՝ ելնելով ոչ միայն մի շարք աւանդական նկատառումներից, - ընդգծում է մոսկուսցի քաղաքագէտ Սամուէլ Նազարեանը: - Սակայն մի նկատառում կայ, որը ոչ մի կերպ «աւանդական» չես կոչի: Ինչպէս էլ որ անտանեն «20-րդ դարակցի իրադարձութիւնները», իրենք՝ իսլամիստները, համոզուած են, որ այդ իրադարձութիւնների հետեւում այլ



ուժեր էին կանգնած՝ հրէական ծագումով նոյն երիտթուրքերը, նոյն մատնները, ինչպէս անուանում էր նրանց սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը»:

Սուլթան Աբդուլ Համիդին տապալած երիտթուրքերը անթաքոյց ի ցոյց էին դնում իրենց քամահրանքը մահմեդականութեան եւ, յատկապէս, իսլամ հիմնադրած արաբների նկատմամբ:

Երիտթուրքերի կուսակցութեան ականաւոր գաղափարախօսներից մէկը՝ պելալ Նուրին գրում էր. «Թրքական մարտական ձին աւելի լաւն է, քան որեւէ այլ ազգի մարգարէ: Արաբները թուրքիայի դժբախտութիւնն են»:

Եւ ահա այսօր ներկայիս թուրքիայի իշխանութիւնը փորձում է երկիրը վերադարձնել 20-րդ դարակցի «գաղափարախօսութեան միջավայր»:

Այլ խօսքով՝ «հին» կամ «իսկական թուրքերը», իսլամիստների կարծիքով՝ չեն մասնակցել «հայկական», «քրտական», «արաբական» իրադարձութիւններին, ուստի եւ մտադիր չեն ընդունել «ուրիշի մեղքը»:

Այսպիսով, ներկայիս թուրքիայի իշխանութիւնները վիթխարի ջանքեր են գործադրում՝ ոչ

միայն եւ ոչ այնքան թուրանական, որքան իսլամական աշխարհում իրենց երկրի դիրքերն ամրապնդելու ուղղութեամբ, եւ աւելի բաց չեն թողնում ցուցադրաբար դէմ արտայայտուելու իսրայէլի քաղաքականութեանը եւ ընդհանրապէս հրեայ ժողովրդի:

Հենց այս հանգամանքով էին պայմանաւորուած անցեալ տարի ԱՄՆ-ի մի շարք հրէական կազմակերպութիւնների կողմից օրէնսդիր իշխանութեանն ուղղուած դիմումները՝ «հայկական բանաձեւն» ընդունելու խնդրանքով:

Պատահական չէ, որ վերջերս ԱՄՆ նախագահի ընտրութիւնների նախկին հանրապետական թեկնածու Ճոն Մկրթչյնը հանդէս եկաւ մի յայտարարութեամբ, որն ամենաքիչը նրանից էին սպասում: «Համոզուած եմ, որ հայերի նկատմամբ ցեղասպանութիւն է իրականացուել, եւ դա ապացուցող բազմաթիւ փաստաթղթեր կան»:

Ամենայն հաւանականութեամբ, Մկրթչյնի «Հայոց Յեղասպանութիւնն իրողութիւն է» հրամայականի համար կանաչ լոյս է վառուել թուրք-հրէական եւ թուրք-իրանական յարաբերութիւնների հակասական աշխարհաքաղաքականութեան խաչմերուկում:

Ընդհանրական Նախաճաշ


Կը հրամցուի՝
ՖՈՒԼ եւ ԴԱՄԱՍԿՈՍԵԱՆ «ՖԵԹԹԷ»

Կազմակերպութեամբ՝
ՄԱՄԻՆԱ

Շաբաթաթերթի Օժանդակ Մարմնի

Կիրակի, 13 Դեկտեմբեր, 2009
Առաւօտեան ժամը 9:30-էն սկսեալ
Հ.Մ.Մ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena

ՆՈՒԷՐ՝ 10 ՏՈՒԱՐ



ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԻԻՏՃԵՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԻՒՆԸ

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ ԸՆԿ. ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՇԵՏ

- Պրն Սկրտչեան, իմ առաջին հարցը առողջապահական համակարգի խնդիրներին ուղղակիօրէն անցնում. այն վերաբերում է ԳԳ Սահմանադրութեանը, որն արձանագրում է. «Հայաստանի Հանրապետութիւնը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրաւական պետութիւն է...»:

- Եթէ անդրադառնանք ինքնիշխան ձեւակերպմանը, ապա սրա վերաբերեալ միշտ էլ կասկածներ եղել են՝ առաւել եւս հայ-թրքական յարաբերութիւնների վերջին զարգացումների համապատկերում: Թէ ինքնիշխանութեան գաղափարը որքանով արտացոլուեց մեր իշխանութիւններին՝ արտաքին քաղաքականութեանը վերաբերող վերջին գործողութիւններում, բաւական վիճալից է: Ակներեւ էր, որ ինքնիշխանութեանը ոչ թէ մենք, այլ բոլոր այն երկրներն էին, որոնք կանգնած էին հայ-թրքական արձանագրութիւնների ստորագրման «թիկունքում»՝ ի դէմս իրենց ներկայացուցիչների: Ինքնիշխան լինելու մասին մեր պատկերացումները սրանով էլ կարող ենք ամփոփել: Իրաւական պետութեան մասին խօսելն, ինձ թւում է, առաւել քան աւելորդ է՝ մարտիմէկեան դատավարութիւնների խայտառակ ընթացքից մինչեւ մարդու իրաւունքների պաշտպանութեան համընդհանուր խնդիրները: Այսինքն՝ հարցականի տակ է սահմանադրական այս նորմն առհասարակ: Ինչ վերաբերում է «ժողովրդավարական պետութիւն» ձեւակերպմանը, ապա երկրում տեղի ունեցող գործընթացները՝ սկսած ընտրութիւններից, հանրահաւաքներից եւ հասարակական կարծիքի ձեւաւորմանն ուղղուած միւս միջոցառումներից, որոնց մասնակիցների նկատմամբ զանգուածային բռնութիւններ են իրականացւում, վերջացրած՝ ՉԼՄ-ներով, մասնաւորապէս՝ հեռուստատեսութիւնը իշխանական մենաշնորհ դարձնելը, վկայում են, որ երկրում ժողովրդավարութիւնն իսպառ բացակայում է: Հենց միայն ժողովրդավարական ճանապարհով իշխանութեան հասնելու անհնարինութիւնն ապացուց է, որ մեր երկրում ժողովրդավարութեան բոլոր ճանապարհները փակ են: Սահմանադրութեան մէջ նաեւ ամրագրուած է «սոցիալական պետութիւն» հասկացութիւնը: Սոցիալական տեսանկիւնից քաղաքացին առաւել քան պաշտպանուած է: Այս ինդիքը մեր երկրում թողնուած է իր իսկ քաղաքացու անպաշտպան ուսերին: Սոցիալական քաղաքականութիւնը, կարծես թէ, ամրագրուած է ցանկացած օրէնսդրական փաթեթում. գործընթակ, այս տարուայ պիւտձէն եւս համարուեց սոցիալական: Ես չգիտեմ՝ այդ պիւտձէով սոցիալական որ իսկերն իրենց պաշտպանուած զգացին:

- Պիւտձէի եւ յատկապէս առողջապահութեան համակարգին տրամադրուող յատկացումների մասին կարելի է իմանալ Ձեր կարծիքը՝ որպէս առողջապահութեան նախկին նախարարի:

- Մեր առողջապահութեան համակարգի պիւտձէն հիւանդապահութեան պիւտձէ է, այլ ոչ թէ՝ առողջութեան պահպանման: Պարագործ է՝ խօսում ենք առողջութեան պահպանման մասին, որը պիւտձէի «սոցիալական» բաժնի մասնաւորութեանը ընդգրկուած բուժօգնութեան ծախսերը, քան ապահով իսլ: Մինչդեռ առողջութիւնը պահպանելու ծախսերը են հարկաւոր, մինչդեռ կառավարութեան ներկայացրած առողջապահութեան համակարգի զարգացման ծրագիրն ինձ իշխանութեանը է հանրայայտ Օտտայ Բենդեքի վասիլի պատմութիւնը... Հիմա էլ Հայաստանը որոշել են դարձնել տարածաշրջանային առողջապահութեան կենտրոն... Նոյնիսկ շարքային քաղաքացին պարզորոշ հասկանում է, որ միայն հիւանդ երեւակայութիւն ունեցողը կարող է մտածել, թէ Հայաստանը առաջիկայում կարող է դառնալ տարածաշրջանային առողջապահութեան կենտրոն: Մինչդեռ անցած շաբաթ կառավարութեան ծրագրից հանուեց շտապօգնութեան բարելւման եւ արդիականացման ծրագիրը: Այսինքն՝ հանրաւորութիւններն այնքան սող են, որ այդ կարեւորագոյն ծրագիրը եւս դուրս մնաց պիւտձէից: Իսկ ինչի՞ հետեւանք են այդ ամպագողգոռ յայտարարութիւնները, եթէ ոչ՝ իրար յաջորդող ընտրութիւններում հանրութեանը հանձնարարու անգուսպ մարմաշի: Գործող իշխանութեան պոպուլիզմի շուսլ օրինակ է մեր երեք միլիարդանոց անիրականանալի պիւտձէն: Ինչ վերաբերում է առողջապահութեան համակարգի յատկացումներին, ապա այս տարի այն կազմում է շուրջ 65մլրդ դրամ, մինչդեռ 2010թ. նախատեսուած է զգալիօրէն աւելի քիչ՝ 54մլրդ դրամի սահմաններում: Այսինքն՝ չի կարելի խոստանալ ամէն ինչ, բայց դրա տակ դնել եւրոպական երկու-երեք հիւանդանոցի տարեկան ծախսի գումար: Ֆինանսատեսական ճգնաժամից են խօսում՝ արդեօք է՞ր կարելի այդքան վարկային միջոցներից, որոնք Հայաստանը վերցրեց միջազգային կազմակերպութիւններից, գոնէ մի փոքրիկ մասն ուղղել սոցիալական աջակցութեան ծրագրերին: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը պետութիւններին առաջարկում է ՀՆԱ-ի առնուազն 5%-ի յատկացում առողջապահութեանը: Վերջին տարիներին այդ ցուցանիշը Հայաստանում կազմել է մօտաւորապէս ՀՆԱ-ի 1,5%-ը: Դա խիտ ցածր ցուցանիշ է: Իսկ մեր «փառապանծ» կառավարութիւնը որդեգրել է, որ 2012թ. առողջապահութեանը յատկացուելիք գումարները պետք է կազմեն ՀՆԱ-ի 2,2%-ը: Հաւատացնում եմ, որ այս տեմպերով նշուած ժամանակամիջոցում նոյնիսկ այս ցուցանիշը չեն ապահովելու:

Իսկ անվճար ծննդօգնութիւնը: Պէտք է պարզապէս ուսումնասիրել համաշխարհային փորձը: Ծննդօգնութեան այս սերտֆիկատը միայն մէկ երկրում է գործում՝ Ռուսաստանում, բայց այնտեղ գործում է պարտադիր բժշկական ապահովագրութիւն, առողջապահութեանը յատկացւում են լրջագոյն ֆինանսական միջոցներ: Այս ծրագիրը Հայաստանում ներդրուել է 2008թ. կէսերին, իսկ 2009թ. գարնանը «Ազատութիւն» ռատիոկայանով «կոալիցիոն» պատգամաւորներից մէկը յայտարարում է, որ ծննդօգնութեան ծառայութիւնն անվճար դարձնելու արդիւնքում մեր երկրում բարձրացել է... Ստացւում է՝ նախորդ տարուայ Յունիսին, հենց յայտարարեցին, որ ծննդօգնութիւնն անվճար է, զոյգերը վազեցին եւ սկսեցին երեխաստեղծ

թիւնները ցոյց են տալիս նաեւ, որ սոցիալապէս անապահով խաւը 2-2,5 անգամ աւելի շատ է դիմում բուժօգնութեան համակարգին, քան ապահով խաւը: Մինչդեռ առողջապահութեան պիւտձէի «սոցիալական» բաժնի մասնաւորութեանը ընդգրկուած բուժօգնութեան ծառայութիւնները» յղուածով նախատեսուած է 200 մլն դրամի նուազեցում՝ ի հեճուկ սոցիալապէս անապահովների թուաքանակի աւելացման: Այսինքն՝ խեղուած են առաջնահերթութիւնների ձեւաւորման սկզբունքները: էժանազին պոպուլիզմով զբաղուելու փոխարէն կառավարութիւնը պէտք է իր մէջ ուժ գտնի՝ հանրութեանը խոստովանելու, որ այս պիւտձէով առողջապահութեան համակարգում հանրաւոր է իրականացնել մէկ-երկու ծրագիր միայն՝ շտապ եւ ամբուլատոր բուժօգնութիւնը, նաեւ յայտարարելու, որ մնացած հիւանդանոցային ծառայութիւնները վճարովի են, որն իրականում այդպէս էլ կա:

- Իսկ անվճար ծննդօգնութիւնը: Պէտք է պարզապէս ուսումնասիրել համաշխարհային փորձը: Ծննդօգնութեան այս սերտֆիկատը միայն մէկ երկրում է գործում՝ Ռուսաստանում, բայց այնտեղ գործում է պարտադիր բժշկական ապահովագրութիւն, առողջապահութեանը յատկացւում են լրջագոյն ֆինանսական միջոցներ: Այս ծրագիրը Հայաստանում ներդրուել է 2008թ. կէսերին, իսկ 2009թ. գարնանը «Ազատութիւն» ռատիոկայանով «կոալիցիոն» պատգամաւորներից մէկը յայտարարում է, որ ծննդօգնութեան ծառայութիւնն անվճար դարձնելու արդիւնքում մեր երկրում բարձրացել է... Ստացւում է՝ նախորդ տարուայ Յունիսին, հենց յայտարարեցին, որ ծննդօգնութիւնն անվճար է, զոյգերը վազեցին եւ սկսեցին երեխաստեղծ

աշխատանքով զբաղուել: Եվ յաջորդ տարի զարնանը մենք տեսանք, որ բնակչութեան աճ է տեղի ունեցել: Սա գաւեշտ է: Առողջապահութեան նախարարը վերջերս յայտարարեց, որ եկող տարուայ պիւտձէն հանրաւորութիւն է տալիս մէկ բնակչի հաշուով ծախսել տասնեօթ հազար դրամ: Համեմատութեան համար ասենք, որ Ռուսաստանն իր մէկ բնակչի առողջութեան վրայ ծախսում է \$280-300, Միացեալ Նահանգները՝ \$8000, իսկ հաս եւրոպական երկրները՝ \$2500-3500: Այսինքն՝ հազիւ \$45 ծախսում ենք մէկ բնակչի հաշուով եւ բացառապէս անվճար ինչ-որ բաներ ենք խոստանում, այդ թւում՝ անվճար ծննդօգնութիւն:

- Այսինքն՝ ժողովրդինը ժողովրդին՝ մեծ խոստումների տեսքով, իսկ համակարգինը համակարգին՝ չնչին պիւտձէի տեսքով, այստեղից էլ՝ կոռուպցիոն ռիսկեր...

- Իւրաքանչիւր տարուայ պիւտձէն հաստատուելիս որոշակի գումարների սահմաններում ծրագրեր են գրում: Այդ ծրագրերը տարեցտարի ուճացւում են, քանզի ընտրութիւնից ընտրութիւն խոստումները մեծանում են, իսկ պիւտձէն շատ փոքր է նախընտրական առատ խոստումները կեանքի կոչելու համար, եւ այդ բացը լրացնում է բնակչութիւնն իր գրպանից: Եթէ կառավարութիւնը պիւտձէով բազմաթիւ ծրագրեր է խոստանում՝ ի սկզբանէ իմանալով, որ միջոցները չեն բաւականացնելու, նա դրանով կոռուպցիայի ռիսկեր է ստեղծում:

- Ի վերջոյ, տուժում է քաղաքացին, քանի որ բժիշկը, միւլտուլին է, նրանից «պոկում» է իր հասանելիքը:

- Այո՛, քանի որ կոռուպցիոն ռիսկերը պետութիւնն է դնում համակարգի առջեւ: Միջազգային

Ահաւասիկ մեծագոյն մարդահրաւերը որ դրուած է մեր առջեւ եւ որ անհանգիստ պէտք է ընէ ամէն մէկս: Այդ անհանգիստ զգացումը մենք կրնանք վերածել ուրախութեան, երբ մեր լուծմանը կը ներդնենք այդ մարտահրաւերի յաղթահարման գործընթացին, հաւատալով որ եթէ ոչ մեր կենդանութեան, ապա մեզի յաջորդող սերունդներու օրով, մեր աշխատանքը պիտի տայ իր պտուղը: Իմ այս խօսքը կ'ուզեմ աւարտել Տօրս դաստիարակիչ մէկ դրուագի նշումով: Հայրս Եղեռնի վերապրող էր: 5 տարեկանին որբացած էր, երբ ծնողքը ջարդէն զոհ գացած էին: Երբ տարիներ առաջ Լոս Անճելըսի մէջ իմ սեփական տունը գնեցի,

Շաբ.ը էջ 18

ՅՈՒՐԵԼԵԱՆ

**ԱՅՍ ԵՍ ԴՈՒ...
ՇԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ**

ԱՆԱՀԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Ծննդավայրս, ծննդավայրս,
Մօտդ կը գամ ոտաբոբիկ,
Ես քեզ պարտք եմ ու տալիք:
Կը գամ մի օր հեկեկալով,
Կ'ընկնեմ գիրկդ մանկան պէս,
Քեզ կ'աղօթեմ խոնարհուե-
լով,

«Հայր Մեր» կ'ասեմ տատուս
պէս:

Ծննդավայրս, իմ հեռուորս,
Շնչեմ, շունչդ ինկաբոյր,
Եւ քո ճամբին ուխտաւորս,
Դառնամ լույսի յորդ աղբիւր:
Ծննդավայրս, ծննդավայրս,
Մօտդ կը գամ ոտաբոբիկ,
Դու իմ սիրոյ սրբավայրս,
Ես քեզ պարտք եմ ու տալիք:

Ճիշտն ասած «Մասիս» շա-
բաթաթերթի գրական էջը փակ-
ուելով յետոյ, որի պատասխանա-
տուն ես էի, յայտնուել էի ստեղծա-
գործական դեպրեսիայի մէջ, որի
մեղաւորը ես էի ու երկար ժամա-
նակ է նախընտրում էի լռել ու
չերեւալ: Չերեւալ հասկանալի է,
բայց լռե՞լ...:

Այս լռութիւնը խախտեց ինձ
նորածանօթ մի հայորդի՝ Յակոբ
Աճէմեանը, նուիրելով քո յոբելիա-
նական երեկոյի հրաւիրատուսը,
որը տեղի է ունենալու Դեկտեմբեր
6-ին, երեկոյեան ժամը 6-ին, Հոլի-
վուոսի Տաղեան Մշակութային
համալիրում:

Վահէ Աջապահեանի կազմատ-
նից դուրս եկա՞յ եւ վերադարձա՞յ
տուն: Յետոյ... յետոյ վերցրեցի քո
գիրքը: Յետոյ յիշողութեան լայ-
նատարած դաշտը սկսուեց լուսա-
ւորուել ու ժամանակը ետ տարաւ
հեռո՞ւ, հեռո՞ւ... Տարաւ տարիներ
առաջ մեր առաջին հանդիպումը
«Մասիս» խմբագրատունը եւ քո
առաջարկութիւնը: Բայց, յետոյ
մենք հանդիպեցինք տարբեր երե-
կոնների եւ շնորհանդէսների: Հան-
դիպեցինք մամուլում, բայց ո՛չ
ձեր տանը, ո՛չ էլ մեր տանը: Եւ իմ
բանաստեղծութիւնները այդպէս էլ
թեւեր չառան, չգգեստաւորուեցին
քո յօրինած երաժշտութեան տակ
եւ մնացին մերկ ու անպաշտպան:
Թէեւ, իմ մի քանի բանաստեղծու-
թիւնները վերածուել են երգի եւ
երգում են գաղութի շնորհաշատ
երգիչներ, բայց իմ ու քո աշխարհ-
ները այդպէս էլ մինչեւ այսօր
մնացին հեռո՞ւ...:

Մեղաւորը՝ իմ հոգների տակ
կքած ժամանակն էր:

Եւ ահա եկաւ ժամանակը, այն
ժամը, որ իմ յիշողութեան դաշ-
տում, շարահիւսելու եմ վայելչա-
գեղ խօսքեր եւ գովերգելու եմ մի
երգահան, դիրիժոր, գրողի, ուսմ
անունը Հենրիկ Անասեան է:

Հենրիկ Անասեան, դու յոյսի
մի տուն, դու լույսի մի տուն: Դու

մի սիւն մեր համայնքի շքեղ
կառուցուածքում, դու մի գերան
հայրենի տան: Դու մի ջահ ես, որ
բոցկլտում է եւ մոմի պէս հալում
իր ազգի ցաւերի համար: Մտքերի
ու յոյզերի գիտակ, որ վարարելով
լցւում է մեր հոգիների մէջ:

Հենրիկ Անասեան, հմուտ եւ
բազմակողմանիօրէն զարգացած մի
հայրենասէր, ունի բարձր գիտակ-
ցութիւն եւ որի զգացումները վի-
ճարկելի չեն: Ունի մարդկային
ակնառու արժանիքներ: Ազնիւ է:
Անձնուրաց եւ ծառայասէր: Նա ան
անհատականութիւնն է, որ ուր էլ
որ լինում է երեւում է իր առանձ-
նայատկութեամբ: Բարի է ու հե-
զահամբոյր: Իր սկզբունքները ան-
շեղ են ու յարգանք են ներշնչում:
Երբ խօսում է, հմայք է տարածում
շուրջը: Կլանում ենք իր լեզուի
մաքրութեամբ ու շքեղութեամբ:
Մտքի իր պայծառութեամբ եւ
յոյզերի իր առատահոս ընթացքով:

Անվարանօրէն կարող ենք ասել,
որ նա երաժիշտ է, դիրիժոր,
երգահան ու գրող: Գրքերի հեղի-
նակ է: Արտասովոր՝ ամէն առու-

մով:

Տաղանդաւոր երգչուհի, չքնաղ
ու բարեհամբոյր Մարիեթան,
անասան սարի նման կանգնեց իր
ամուսնու կողքին: Դարձաւ նրա
անթառամ աչգին: Պաշտամունքը:
Երանութիւնն ու երազը:

Դարձաւ նրա անկոտորում ոգին
եւ Անասեանին դարձրեց էլ աւելի
ուժեղ:

30 տարիներ առաջ, լուսանձե-
լըսահայ համայնքը նոր ծաղկում է
ապրել: Մինչեւ այսօր «Սիփան»
երգչախումբը, հիմնադիր Հենրիկ
Անասեանի անխոցելի է, անխոցելի
է դարձել նրա դիրքն ու ընթացքը:
Նրա համբաւը տարածուել է Սփիւռ-
քից մինչեւ Հայաստան:

Հենրիկ Անասեանը եզակիինե-
րից է, որ իրեն յատուկ ոճով, իր
մտքի ու տաղանդի առանձնայատ-
կութեամբ կերպարանաւորում է
ցեղապայմութեան ահաւորութիւնը
եւ միաժամանակ արտայայտում
թուրք ոճրագործների քստմնելի
ու անմարդկային վերաբերմունքը
հայ ազգի նկատմամբ: Հենրիկ
Անասեանը կենդանութիւն է տալիս
մեր մեծ ու հանճարեղ Կոմիտասին,
ապացուցում, որ նա իր հրաշա-
գործ ու ժողովրդական երգերով,
մեղեդիներով, շարականային եւ

պատարագային ստեղծագործու-
թիւններով, Աստուծոյ նման էր:
Աստուած որ չկարողացաւ օգնել
մեր ժողովրդին, երբ մենք կոտոր-
ւում էինք թուրք ոճրագործների
արիւնոտ ձեռքերով: Թուրք, որ
թուրք էր: Թուրք էլ մնացել է:
Երբեք չի էլ փոխուելու: Թուրք էլ
կը մնայ:

Հենրիկ Անասեանը հային վա-
յել բարձր արժանապատուութեան
վրայ է մնացել եւ պահում է իր
անկոտորում հաւատն ու հայրենա-
սիրութեան գերագոյն իտէալները:
Ապացուցը՝ նրա «Սիփան» երգչա-
խումբը:

Անվերջանալի ասելիքս աւար-
տում եմ իմ սիրելի մայեստրոյի
«Այս եմ ես...» Ա. գրքի մակագր-
ուած անջնջելի տողերով:

«Անահիտ ջան, ես գրող չեմ,
եւ միայն գրել գիտեմ, իսկ դու ե՛ւ
գրող ես ե՛ւ գրել գիտես...»

- Այս եմ ես...

- Այս ես դու...

Ուրեմն՝ ձեռք տանք մէկ-
մէկու ու գնանք հեռո՞ւ, հեռո՞ւ...»
Հիացմունքս չեմ կարող թաքցնել՝
մայեստրօ:

Հիացմունքս...

Ա՛յս ես դու... Հենրիկ Անասե-
ան:

**ՀՈՒՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ
ՆՎԻՐՎԱԾ՝**

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍՅԱՆԻ

**ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ-ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 50 - ԱՄՅԱԿԻՆ ԵՒ
«ՍԻՓԱՆ» ԵՐԳՉԱՆՄԱԲ 30 - ԱՄՅԱԿԻՆ**

Հովանավորութեամբ՝
Հյուսիսային Ամերիկայի Հայ Եկեղեցու Արևմտ. Թեմի Առաջնորդ,
Գեղ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ
Նախագահութեամբ՝
Տեր և Տիկին ՊԵՏՐՈՍ ԵՒ ԿԱՐԻՆԵ ՏԱՂՅԱՆՆԵՐԻ
Մասնակցութեամբ՝
Մենակատարների, «ՍԻՓԱՆ» երգչախմբի
Գեղ. ղեկավար՝ ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍՅԱՆ
Խմբավար՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐՈՍՅԱՆ
Դաշնակահար՝ ԼԵՒՈՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հանդիսավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՅՈՂՈՒԼՅԱՆ

Երեկոն տեղի կունենա՝
2009 թ. Դեկտեմբերի 6 - ին, Երեկոյան ժամը 6 - ին,
Հոլիվուդի Taglyan Cultural Complex - ում
(Հասցե. 1201 N. Vine Str. Hollywood, Ca 90038)

Մուտքը հրավիրատուներով
Ընկերային ժամ՝ երեկոյից հետո

Մանրամասնությունների համար զանգահարել.
(323) 466-3726, (323) 660-7152, (323) 807-7878, (626) 437-1082

**Չեր Ծանուցումները
Վստահեցեք
«Մասիս»
Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F:
(626) 797-6863
massis2@earthlink.net**

ԳՐԱԿԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆԻՆ (ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ

Յարգելի աւագ գրչեղբայր, յոյսով, հաւատով ու սիրով կարգացի «Ձմռան Շեմին» չափածոյ ժողովածուդ: Գաղտնիք չէ, որ բանաստեղծական քո ներաշխարհին ծանօթանալիս՝ բնաւ էլ չչայտնուեցի ձմրան շեմին: Ընհակառակը ես էլ ինձ տեսայ գարնան շեմին, ամրան շեմին, աշնան շեմին: Մտահոգուեցի կեանքի բոլոր շեմերով՝ ջանալով վերապրել այն ամէնը, ինչը ներուժ է եղել քո գիրքը գրելիս-կազմելիս: Ես առողջ գարկերակի հանիպելիս՝ բնաւ որութեանս համաձայն չեմ կարողանում լռել: Ահա եւ գրաձայնում եմ տպաւորութիւններս, որոնք չխախտելով իմ բաց նամակի սահմանները՝ ծանօթութեան հարթակից բարձրանում են գրախօսութեան տիրոջ: Ուստի արժեք չլռել, քանչի՛ր

»Աշխարհը դարձել է ճերմակ« (էջ 1)

Իսկ ձեան ձերմակը մաքրութիւն է, թէեւ գիտեմ, որ ձմեռը ձերմութիւն է խորհրդանշում: Գրքիդ չորս շեմերով նախ՝ ընթերցողաբար, ապա նաեւ գրչեղբայրաբար «ներխուժելիս»՝ ես գիտարարի նման հրճուանքս չկարողացայ զսպել ու բացականչեցի «էվրիկա՛»... այո, ես «գտա» քեզ ու քո անաստեղծական եսի օգտակար գործողութեան գործակիցը, որն անչափ անհրաժեշտ է ընթերցասէր մարդուն: Դու՛ ձ վաստակաշատ բանաստեղծը, «սարսա փելի» յուզաթաթախ ես գրում: Վարակիչ անմիջականութեամբ ընթերցողին ներքաշում ես պատումի խորքը, յոյս, հաւատ, սէր ներշնչում՝ յանուն սեփական կեանքի ու կամքի: Ասեմ, որ ընդհանրապէս դա քեզ յաջողուել է: Ինչպէս «Ձմեռնամուտ» բանաստեղծութեան ստեղծման պահին, որը ճակատագրի եղանակային չորս սահմանաշեմերի, նրանցից անդին ծուարած տաք ներաշխարհների մասին է անկաշկանդ տարփողում:

... Ես անցել եմ գարնան ճամբաները կանաչ, Արբել վարդերի բոյրով, Ապրել երազներով կապոյտ: Ես տեսել եմ ամառ, Եւ զգացել անապատների Կիզիչ աւագների Շոգն անհրապոյր: Դեղին արահետներով Դալուկ տերեւներ կոխելով, Դիմաւորել եմ կամայ Իմ աշունը ոսկեայ: Զիմա հասե եմ Վերջին հանգրուանին՝ Յրտաշունչ ձմռան, Անցում եմ դանդաղ Ու փռում ճերմակ սաւանին Յոգնած ոտքերիս Անգոր հետքերը, Ու երգերս վերջին... (էջ 2)

Ձիւնը «երկնային բարիք» համարելով առաջանում ես քո իսկ ձմրան միջով, սակայն գարնան զգլխիչ կանաչը, ամրան արեւավառ ոսկերանգը, աշնան կապտամրմունջն են ուղեկցում քեզ՝ նուիրուած ու վատահելի թիկնապահների նման: Սա իսկական բանաստեղծի կեցուածք է, Աստուծոյ հաւատաւորի եռանդ: Ինձ համո-

զում է տարիքային ձմեռը, որովհետեւ այն ոչ միայն ժամանակագրական հասկացողութիւն է, այլեւ բանաստեղծական փոխաբերութիւն, որ այլ հրապոյր ու կախարդանքի հասնող միջիթարութիւն ունի: Հոգիդ ու ոգիդ տակաւին ջահել հրայրքների ոլորտում են սաւառնում ու մղում ազդարարելու ներքոյ յիշեալ ճակատագրական հարցադրումը:

Ո՛վ է տեսել երկուայ վերադարձը... (էջ 5)

Յիրաւի, անցեալ կատարելից ոչ ոքի առայժմ չի յաջողուել վերադառնալ ներկայ ժամանակի մէջ, աւելին՝ դեռ ապառնի ժամանակի դուռն էլ թակել համարձակորէն: Ժամանակների առք ու վաճառք չկայ: Երէկից դէպի այսօրը ետ գալու միակ ճանապարհը անմահութեան կամընթաց է անցնում, բանաստեղծների համար առաւել եւս այդպէս է իբրեւ չգրուած օրէնք, որքան էլ «դառնայ ցաւի ու տանջանքի անիւր»: Գրքիդ կենսափոխտրոփալութիւնը կաշառող է իր ողջ լաւատեսութեամբ, չնայած որ

... Փոխուել են դերերը, Տարբեր են դեղերը... (էջ 8) Թերթելով «սփիւռքի գիրքը» մենք ջանում ենք վանել ուժացման վտանգը, որը Դամոկլեան թրի պէս կախուած է մեր հայութեան թիթիգօրէն թշուառ գլխավերեւում: Անտարբեր չես ազգայինի հանդէպ: Մերութեան մրափը ճգնում է՞ խճճել քեզ: Դու աներեր ու երիտասարդավարի ստեղծագործում ես՝ յանգելով «խաջող մենութիւն» ապտակող բանաստեղծական ամանորի ներքոյ յիշեալ գիւտին:

... Բայց մէկը չկայ, Որի բաժակին զարկեմ Եւ մաղթեմ լաւն ու բարին: Ու ես յուսահատ Ձեռքս տանում եմ վեր, Ձարկում առաստաղին պաղ, Ու խմում եմ մռայլ Բայց խաղաղ Մեմուեան կեմացը: (էջ 11)

Հայելու մէջ բաժակ խփելով ինքնակենաց խմել տեսել եմ՝ յանձին կատակերգակ դերասան Մհեր Մկրտչեանի «Կովկասի գերուհին» շարժանկարում: Նման կենացի վիթխարի մի պատկեր էլ կայ Յովհաննէս Շիրազի մօտ, որ ասում է՝ «Բաժակս գարկեմ Արարատ սարին, կենացդ խմեմ ռուս ժողովուրդ»: Սակայն առաստաղին բաժակ խփելը չէի պատկերացնում: Քո հիպերբոլիկ պատկերն այդ

երբեք չի մոռացուի: Անհար է այն ջնջել ընթերցողի չիչողութեան լայնչի գրատախտակից, քանզի Նորբեյիանակիր գրող Գաբրիէլ Մարկեանի «Հարիւր տարուայ մենութիւն» վպէի մենակեացութեան դադարոչ ուղտը երբեմն չոքում է բոլոր դրանը, դրանից բացի էլ այդ ծուռ ուղտի պար գալը բռնում է ճակատագրի խարխուլ կամըջի վրայ... ու փուլ է գալիս ինամուած կեանքը՝ իր իսկ աւերակի ներքոյ թաղելով յուսոյ հաւատի ու սիրոյ հաւաքական աճիւնը... Չեն փրկի անգամ ասածը՝ «վահաններ դառած տաք վերմակները»: Եւ դու՛ շնորհաշատ բանաստեղծը տուայտում ես տարիքիդ բեռան տակ, բայց պեղելով այն, վեր հանելով «լաւն ու բարին», ի ցոյց դնելով սեփական տառապանքի բանաստեղծական նահանջի գեղեկութիւնը:

»Կեանքի մարտը վերջացաւ...« (էջ 19) Թոյլ տուր այստեղ դոյզն ինչ չհամաձայնել: Ախր, գոյապարքաբար շարունակելի է բոլոր տարիքներում էլ: Նրա դառնանուչ խաղը գրաւում է մարդկանց: Մէկը լռում է այդ մասին: Միւսը ճչում է: Երրորդն էլ քեզ նման բանաստեղծութիւն է գրում, որ «կենաքի մարտը» ոչ թէ պրծած կոչուի, այլ երկարացուած, որովհետեւ:

Մար.ք էջ 17

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Ա.ՍՄՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՅ

Պոլսահայ Հանրածանօթ Ասմունքող

ՍԻԼՎԱ ԿՈՄԻԿԵԱՆԻ hbn

Մասնակցութեամբ՝ յայտնի տուտուկահար Ալպէրք Վարդանեանի

(անդամ՝ Չորասուան Հայկական Երաժշտական Համոյթի) Ուրբաթ, Գեկտեմբեր 4, 2009 կէսօրէ ետք ժամը 8:30ին

Հիւրասիրտութիւն Մուտքը՝ ազատ

6844 Oakdale Ave., Canoga Park, CA 91306

Յաւելեալ տեղեկութիւններու համար hbnաձայնել՝ Snf. Ծովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800-1976

THE CULTURAL COMMITTEE OF ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS Presents POETIC EVENING By Renowned Reciter SILVA GOMIGIAN With the participation of famous Dudug player ALBERT VARTANYAN (member of Choukasian Armenian Concert Ensemble)

Friday, December 4, 2009 at 8:30 P.M. At AGBU Manoogian-Demirdjian School's "Agajanian" Hall 6844 Oakdale Ave. Canoga Park, CA 91306 For more info: Please call: Dr. Ohannes Kulak Avedikyan at (818) 800-1976 Reception - Free Admission

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

ԾԻՆԵԼՈՒ ՎՆԱՍԸ

«ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԴԵՌ ԱՄԷՆ ԻՆՉ ՁԷ, ԲԱՅՅ ԱՌԱՆՅ ԴՐԱ ԱՄԷՆ ԻՆՉ ՈՉԻՆՉ Է»

ԱՆՈՒՇ ՅԱԿՈԲԵԱՆ

Հոգեբանական կախումաբերական կամ սովորաբերական

Անյարմարաբեկություններն զգա- ցումը, որ զգում են ծխելը դադար- ելուց չեսոյ առաջին օրերի ըն- թացքում, շատ ծխողների կողմից ընկալվում է որպես ֆիզիքական նշաններ, որ ծխախոտ ընդունելու դադարեցման հետևանք են: Մա- կայն այդ վիճակը նախ եւ առաջ հոգեբանական կախումաբերական եւ կապումաբերական հետևանք է, որ ձեւաւորուել է ծխելու ընթացքում:

Իւրաքանչիւր մարդ ունի սո- վորութիւններ: Եթէ չլինէին դրանք, մենք նորածին երեխաների նման անօդակալ կը լինէինք:

Անգամ քայլելու ունա- կութիւնը՝ սովորութիւն է: Որ- պէսզի քայլել սովորել, շատ ժամա- նակ եւ վարժումաբերական է պէտք: Զարմանալի է, որ երեխան շատ անգամ ընկնում է եւ վեր կենում նախքան այդ արուեստին տիրա- պետելը: Մեր աւօրեայ գործերից մեծամասնութիւնը շատ բարդ հմտութիւնների համաձայնեցում են պահանջում: Դա անհրաժեշտ է, որպէսզի մարդը կարողանայ քայ- լել, ուտել, խօսել, մեքենայ վարել, լողալ, թռչկոտել եւ կատարել այլ սովորական գործողութիւններ: Բա- րեբախտաբար, այդ բոլոր գործո- ղութիւնները չեն պահանջում գի- տակցութեան մասնակցութիւնը: Օրինակ, մենք կարող ենք մտածել եւ խօսել քայլելիս, կամ ուտելու ժամանակ: Այլ խօսքերով, կատա- րելով բարդ ինդիք, մենք կարող ենք մեր ուշադրութիւնը չվատնել ամէն մի մկանի կծկման վրայ:

Ծխողի համար կարեւոր սո- վորութիւններից մէկն է հանդիսա- նում ծխելը: Շատ մարդկանց հա- մար ծխելը դառնում է նրանց կեանքի անբաժանելի մասը՝ աւտո- մատիզմ դարձած: Յաճախ ծխողը՝ զլանակը տուփից հանելով, վառե- լով եւ մինչեւ կէսը ծխելով, անգամ մինչեւ վերջ չի էլ գիտակցում, թէ ինչ է իր հետ կատարուել: Շատ ծխողների համար նրանց սովո- րութիւնը սերտօրէն կապուած է կեանքի լաւ ծանօթ իրավիճակնե- րի հետ. նախաճաշ, սուրճ, աշխա- տանքի աւարտ, դեկավարի հետ ծանր խօսակցութիւն եւ, ի վերջոյ, մեքենայ վարել: Ծխելու պրոցեսը այն աստիճան է ներհիւսուում աւօրեայ կեանքի մէջ, որ շատ բան սկսում է այսպէս թէ այնպէս կա- պակցուել ծխելու հետ: Որոշ հոգե- բաններ սովորութեան ձեւաւորու- մը կապում են մարդու ուղեղում

յատուկ նեարդային ուղիների առա- ջացման հետ:

Մեզանից իւրաքանչիւրը բազ- մաթիւ այդպիսի նեարդային ու- ղիներ ունի, որոնք դարձել են գերակշռող յաճախակի օգտագործ- ման հետեւանքով: Այդ ուղիների գործունէութիւնը կարգաւորում է առանց գիտակցութեան մասնակ- ցութեան:

Մարդու ուղեղը տարբերում է կենդանիների ուղեղից ճակատա- յին բլթերի առկայութեամբ: Ու- ղեղի այս հատուածը մասնակցում է բարձրագոյն մտածողական գոր- ծողութիւնների իրականացմանը: Ճակատային բլթերի վնասման ժա- մանակ չի տուժում մարդու ինտե- լեկտը, ինչպէս նաեւ խօսելու, գրե- լու եւ մաթեմատիկական հաշուարկ- ներ կատարելու նրա ընդունա- կութիւնը: Զի տուժում նա- շարժուելու եւ զգացողութիւններ ընկալելու ընդունակութիւնը:

Բայց, այնուամենայնիւ, առողջ դատելու ունակութիւնը բաւակա- նին տուժում է, վարքը դառնում է անկառավարելի, իսկ արարքներն՝ անկանխատեսելի: Ծխելու ժամա- նակ ճակատային բլթերի նեարդա- յին բլթիջները ճնշում են աւելի շատ, քան ուղեղի այլ բլթիջները:


Նույնը տեղի է ունենում նաեւ ալքոհոլ օգտագործելուց. նուա- գում է դատողական մտածո- ղութիւնը: Թէեւ մեր վարքի մեծ մասը բաղկացած է սովորական ռեակցիաներից ի պատասխան սո- վորական ազդեցութիւնների, մենք, այնուամենայնիւ, ընդունակ ենք փոխելու կալուն ստերեոտիպները եւ սովորութեանը հակառակ ըն- թացող որոշում կայացնելու: Դա լրացուցիչ ուժեր եւ ուշադրութեան կեդրոնացում է պահանջում, ինչը յաճախ քիչ է մարդու մօտ, եւ այդ պատճառով կարող է ընկալուել որպէս լուրջ փորձութիւն, որը պահանջում է ճակատային բլթերի բարձր ակտիւութիւն: Օրինակ, մարդը որոշում է թողնել ծխելը: Այդ որոշումը հակասում է բազմա- թիւ լաւ իւրացուած սովորութիւն-

ներին, որոնց հետ ծխելը սերտօրէն կապուած է ենթագիտակցական մա- կարդակում: Այժմ, որպէսզի յաջո- ղությամբ կատարել այդ նոյն սո- վորութիւն դարձած գործողութիւն- ներն առանց ծխելու, անհրաժեշտ են գիտակցված ջանքեր, այսինքն ճակատային բլթերի աշխատանքը:

Ուղեղում ստեղծուած նեար- դային ուղիների ակտիւ օգտա- գործման դադարեցումը հանգեց- նում է այն բանին, որ անգամ ոչ բարդ գործողութիւնները երբեմն պահանջում են լրացուցիչ կեդրո- նացում: Ամէն անգամ, երբ մարդը կատարում է իր համար անսովոր նոր գործողութիւն, նրա ուղեղում նոր ուղի է ստեղծուում, որը ժամա- նակի ընթացքում լայնանում է բազմաթիւ կրկնողութիւնների հաշուին: Ծխելը դադարելուց սկսում է նոր սովորութիւնների ձեւաւորման պրոցէս: Այն ամէնը, ինչը նախկինում անպայման պա- հանջում էր ծխախոտի առկա- յութիւն, մարդը սովորում է անել առանց դրա. մեքենայ վարել, նեար- դերը հանգստացնել, սթրեսային իրավիճակից դուրս գալ եւ այլն:

NEW YEAR'S DINNER DANCE


AFTER LAST NEW YEAR'S HUGE SUCCESS !!
 BEAT ENTERTAINMENT PRESENTS ONE MORE TIME
 THE NATION'S MOST EXPERIENCED DJ...



HeartBeat DJ
 Thursday December 31st 2009

IMPERIAL PALACE
 1175 N. Lake Ave. Pasadena, CA 91104

Doors open 8:00 pm
 Incredible show and surprises
 Gourmet 20 kinds of appetizers & 3 main courses
 Bottle of black or Grey Goose, red or white wine included
 Tickets \$100 and \$125



For more information please contact:
 Vasken 818.288.7188 or 818.956.1555
 Email: djvasken@yahoo.com

PROUD SPONSORS

PLAYBOY ENERGY DRINK
 PAOLO GIARDINI
 Eurasian Automotive
 Giorgio Cosani
 Gianni Suit Warehouse
MEN'S SUIT OUTLET
 SARKIS PASTRY

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
 PASADENA, CA 91104
 Norserount@sbcglobal.net

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՆԵՐՄԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆԻՆ

Շարունակում է 15-էն

Չեն մեռնում երգերը երբեք,
Յաւերժ են, մահ չկայ երգին...
(էջ 20)

Պիտի խոստովանեմ, որ գրքիդ
ուղղագրութիւնը սպանեց ինձ, մէջ-
բերումներ անելիս, քանզի Արեւե-
լահայերէնի մէջ խորացած, արհես-
տավարժ գրողիս համար դա պար-
պազ դարձնում էր: Սա ասացի հենց
այնպէս: Ինչեւէ, շարունակեմ անաչո-
ծամբորդութիւնս արտաքուստ հա-
մեստ, բայց ներքուս հպարտ ժողո-
վածուիդ միջով:

Թողէք իմ թախտից վեր կեանք,
գնամ

Թողէք իմ բախտից հեռանամ,
գնամ,

Սրտակից ունեմ հեռու, շատ հե-
ռու

Թողէք իմ վախտից չուշանամ,
գնամ... (էջ 24)

Կամ
Ոչ աղքատը պատանից
Ձուր կէ մտել գերեզման,
Ոչ ունեւորն է տարել
Մի պատանից աւել բան: (էջ
25)

Հասարակական կարծիքի «գա-
զան դառած գառը» մայրում-
մունչում է ամենուրեք, փորձում է
գրականութեան հերն անիծել իր
բռնութեամբ: Յօշոտում է ամենայն
ճաշակ ու խոհափիլիսոփայութիւն,
բայց գրողը գերծ մնալով վտան-
գաւոր կարծիքից, հետեւում է նոյն
այդ հասարակութեան ինքնավախ-
ճանին՝ մատնանշում-ձաղկում է
նրա արատները, ասնատականու-
թիւն ծաղրելու ճիգը: Սակայն ոչ
ոք ու ոչ մի ոչինչ չի կարող
կասցնել գրողի հայրենասիրական
այսպիսի մաղթանքը:

Օլես, ժողկես, մեծանասա,
Միմչել Մասիս բարձրանաս...
(էջ 29)

Այո, երանի այդ սերնդին, որ
պիտի Արարատ լեռը բարձրանայ՝
կրկնելով Աբովեանական սիրան-
քը: Հազար երանի... Գրականու-
թեամբ ամէն ինչ հնարաւոր է
իրագործել, տա Աստուած՝ այդպէս
լինի ազգի կենաքու մէջ:

Եկել եմ ես՝ պապերիս հերկած
հողը

Յամբուրեմ... (էջ 29)

Քաղաքացիականութեամբ թա-
թախուն հայի կողքին «գերբնա-
կան հայեացքներով» զինուած հա-
յուհու կերպարն է յառնում, ըն-
թերցողին տանում իր անմար «սի-
րոյ ցոլքերի» միջով: Կեցցես, աւագ
գրչեղբայր, որ «ձմրան շեմին» էլ
զարնանային սիրոյ հերզեսներ ես
նշմարում: Կեցցենք նաեւ, սիրոյ
հակի զոհաբերած Չերմութիւնն ու
լոյս, որոնք տարաքնում-պայծա-
ռացնում են ցանկացած ընթերցո-
ղի, գուլալ արցունքով սեղմում
կոկորդն ու մեղմում նրա այսօրի-
նակ ընդվզում-ձիչը:

Քեզ հազար անժօք
Յայի անողոք,

Մեւ ճակատագիր... (էջ 32)

Ես չեմ հաւատում
Երբ որ ասում են՝

»Կոսում եմ վիշտոկ«:

Մի՞թէ խնձոր է,

Որ անես մաս-մաս

Ու կոտրանքը)գուցէ կտոր-

տա՞նքը(

Սրան-ճրան տաս...

Մեր ցաւն ու վիշտը

)թէ ճիշտը կ'ուզես(

Չեն կիսուում երբեք,

Այլ՝ կուտակում են,

Դառնում ձիւնահիւս

Բազմապատկում են ու տեղա-

ւորում

Մէկ բուռ սրտի մէջ,
Աճում, ուռճանում,
Եւ վերջ ի վերջոյ

Կործանում մարդուն... (էջ 33)

Լրիւ մէջբերեցի «Անկիսե-
լին» վերնագրով բանաստեղծու-
թիւնդ, քանզի ամենայնողում-
ներից մէկն է: Ի դէպ, մի քանի
սոսկական ձօներ էլ կան, որոնք բան
չասացին հոգուս: Արհեստականու-
թիւնը երբեք էլ բարձրաժեքու-
թիւն չի ապահովում: Իմ որոնածը
մաքրամաքուր բանաստեղծականու-
թիւնն է, որ նոյնիսկ պանդխտու-
թեան թեմայով ի վիճակի է վեր
հանել միջավայրի բարբերը:

Թոյլ ու միամիտ, անկամ մար-
դու գործ,

Լքել հայրենիք ու սեփական
տուն

Ու դառնալ անտուն,
Օտարի հողում կու գալ,

Ծաւրել

Ու շրջապատին դիր գալու հա-
մար

Սրան ու նրան վախով բարե-
ւել... (էջ 36)

Ժամանակի անարդարութեան
ու մեղանշմնա բախումն է առկայ
այս տողերի մէջ, որ շատ է բնորոշ
ողջ հայութեն համար, երբ նա
խորհում է նաեւ տունդարձի մա-
սին:

Ես կը գամ
Տարագիր կռուկներու երամի

հետ,

Կը բերեմ քեզ երգերս
Ուրախ ու թախծու... (էջ 0)

Ես 1980-ին հայերնի «Աւան-
գարդ» օրաթերթում տպագրեցի
«Չու՛մ էք, հայեր» բանաստեղ-
ծութիւնը, սակայն տանընդորս տա-
րի անց երկրաշարժի մեղքով էլ
ինքս դարձած «չտող հայ» եւ
մինչեւ հիմա յարմար առիթ եմ
որոնում ես չուելու, իսկ առիթը
դեռ չի գալիս, չգալ չի կարող,
անպայման գալու է իբրեւ նոր
ներգաղթի հնարաւորութիւն: Յու-
սանք եւ սպասենք այդ բաղձալի
օրուան: Ես՝ իմ սկզբունքի համա-
ձայն, գրել եմ, որ հայերնիք եմ
ցանկացած վայրում, ուստի հար-
կաւոր է ոչ թէ տրտմել, այլ տոկալ,
մաքառել-մարտնչել յանուն հա-
մագգային վաղուայ:

Տէ՛ր, պարգետիր այս աշխար-
հին

Յաւերժական խաղաղութիւն
(էջ 41)

Յարգեցի յուրայի անունը
փոքրատառով գրելուդ վճիռը: Հա-
յոց քերականութիւնը չի տուժել,
ընդհակառակը՝ գերազույց այդ դա-
ւաճանի պորտը տեղը դրուած է
համարում: Բա ո՞նց: Դա էլ է
գրողական մօտեցում: Կեցցես: Ես
ուշի ուշով գննեցի քո տաղաչափա-
կան մօտեցումները: Հասկացայ, որ
քեզ ազատ տողն է հիմնականում
հետաքրքրում: Դու կարեւորում ես
ինքնաբուխ օրինականութիւնը:
Հանգաւորման արհեստն ու ար-
ուեստը քեզ համար երկրորդական
են կարծես, բռնահանգն ու խիստ
չափածոն՝ այսպէս: Գուցէ: Բայց,
ախր, նեարդի պէտ բաց տողերը
պահանջում են բնական ներշն-
չանք: Դրանով էլ ես դու ինքնա-
տիպ: Աւելորդ ճիգ ու ջանք չես
դնում: Քոնը հասկանալի պարզն է,
ոչ թէ անասելիք բառակոյտ-պար-
զունակը:

Յարգարժան Ներսէս Տ. Մես-
րոպեան, դու քո առօրեայ համես-
տութիւնը բերել ես գիրք ու չես
սխալուել: Քո բանաստեղծական տե-
սակին յարիր դիրքորոշում է դա:

Ամէն ինչ ունի իր անկիւնքարը,
իրենց նպատակն արդարացնող ար-
տայալայնամիջոցները: «Երկնքից
պոկուած սրբատաշ խաչքար»-ն է
ասես հայրենի երկիրը, որի սրտա-
բուխ գովքն անընդհար անում ես:
Շատ սիրելուց է երեւի, որ գմուտած
է առելութիւնդ: Դա էլ գրողական
վարքածգի քաղաքականութիւնն է:
Չէնք, որ ից դու հմուտ օգտոււմ ես՝
նշանակէտը գգեսնելու համար: Յա-
ճախ կրկնելով «մի տարի էլ ան-
ցաւ» տողը, փորձում ես արթուն
պահել նախ քեզ, ապա ընթերցո-
ղին, որ չմոռացուի կնճիռի աւելա-
նալու, մագի պակասելու գործըն-
թացը: Այսինքն, դիմակայում ես.

... Ոչ ոք հայի պէս
կարօտ չի գգում,

Ոչ ոք հայի պէս կարօտ չի ապ-
րում,

Չի էլ կարօտում... (էջ 62)

Գրքիդ շահեկան կողմն է նաեւ
բազմաթեմայնութիւնը: Հանգա-
մանք, որը քչերի մենաշնորհն է:
Ախր, ամէն մի թեմա պահանջում
է միայն իրենը:

... Երբ փշրոււմ է կեանք ապա-
կին,

Էլ չի գեղոււմ ոչ ոք մեզանով...
(էջ 67)

Սա էլ ծերութեան ածանցեալ՝
մենակութեան-ըռածութեան մա-
սին է, որ անգամ Աստուած չի
հասցնում միւթարութիւն գտնել,
խրթին իրավիճակներից դուրս բե-
րել, ընտանեկան ջերմութեամբ ու
գուրգուրանքով պարուրել մեծաց
խռովկանութիւնը: Եւ «Օրացոյցից
թերթիկ է պակասում», իսկ մեծ
կեանքից՝ մարդ... մարդկութեան
հաւասարակշռութիւնը վայրկեան
առ վայրկեան խախտում է, վայրկե-
ան առ վայրկեան էլ շտկում:
տարուբերում է ճակատագրի ան-
նամանակը շորթելով իր հասանե-
լիքը՝ փլկում է եօթ սարի ետեւ,
մէջտեղում մնում է անկողմնակալ,
բայց արդէն անյոյս, անհաւատ,
անհէր յիշողութիւնը միայն, որի
«պտուղները» գործովայից խժուում
է իրեն վաղուց անտարբեր դարձ-
րած, կարեկցանքից հեռու մրափող
հասարակութիւնը... Մենակութեան
ձնագնդիկը գլորում է էջ առ էջ,
անասելի մեծանում ու տակովն
անում իր թիրախին: Բախտի նժա-
րից ակթկթում է բժժած բարու-
թիւնը, ու էլի «սայլը տեղից չի
շարժոււմ, քանզի տարբեր ուղղու-
թիւններով են նոյն այդ սայլը
քաշքշում հասարակութեան «եռան-
դու» անդամիկները»: Անհատները
ծոկամոյն են լինում նաեւ ճահճա-
յին որկրամոլութեամբ կլլող ցա-
մաքի վրայ: Բանաստեղծը ծառս է
լինում, մունչում է մինչեւ կոյր ու
խուլ երկինքները, աւա՛ղ, ապար-
դիւն.

... Կը վերջակտուի իմ ժամա-
նակը... (էջ 71)

Աւելորդ չեմ համարում խօս-
խել գրքիդ աւելորդ կէտադրու-

թիւնների, պատճէնը ճիշտ որոշեալ
յօղով չգրելու, ծիծեռնակները եր-
բեք ծառերին բոյն չեն շինում-ի ու
այլ տեխնիկական թերոյթներ
շուրջ: Հեշտ շտկող բանե են:
Էականը քո չափածոյ ասելիքն է,
որը կայ ու տեղուց վրայ հասնում
է ընթերցողին, տանում լուսեղէն
յուշերի գիրկը, փայլալուստ-հարա-
գատացնում: Իրապէս քո սրտա-
բուխ, ամբողջական գործերից են՝
«Խօսք սրտանց» կոչուած բանաս-
տեղծութիւնը (էջ 83), որը կարող
է ցանկացած տեղ վերահարտա-
րակուել, «Պատուէր ու կտակ»
առանձնացող էլեգիան՝ իր ուղեր-
ձով հանդերձ (էջ 82) ու «Մնաք
բարով» յորդորը (էջ 87):

Վաստակաշատ գրչեղբայր, որ-
քան էլ «արցունքով լուսա փոշին
օրերի», ֆիզիքական վերադարձն
այլեւս չի կայանայ, իսկ մարդկա-
յին մտքի առայժմ անգերազանցե-
լի արագութիւնն ի վիճակի է անել
դա: Սա էլ ամենամեծ միւթարու-
թիւնը: Հանգրուաններ փոփոխելու
սովորոյթը հայերիս համար ազգա-
յին յատկանիշ է, արիւնով անցնող
որակ ու ժառանգականութիւն: Իսկ
գրքիդ վերջին, «վերջացաւ» խո-
րանագրող բանաստեղծութիւնը, որ
ծաւալի սեղմութեան շնորհիւ ամ-
բողջութեամբ մէջբերելու հնարաւո-
րութիւն տուեց, եթէ վերահարտ-
րակուի այս գործը, գրբեղբայրա-
բար կը խնդրուի քեզ՝ երգ ու վէրք
բառերի տեղերը փոխել, որ տրա-
մաբանութիւնը շահի:

Երգս գնաց,
Վերքս մնաց,

Էլ իմ կեանքից ի՞նչ մնաց,
Լաւը գնաց,

Յաւը մնաց,
Յաւից բացի ի՞նչ մնաց:

Երգս գնաց,
Վերքս մնաց,

Ձախել կեանքս շուտ անցաւ,
Լաւը գնաց,

Յաւը մնաց,
Էլ ինչ որ էր անց կացաւ: (էջ 89)

Գիրքը՝ թէեւ լաւատեսական
նոտայով չի աւարտոււմ, որի հա-
մար առաջարկեցի երգ ու վէրք
բառերի տեղերը փոխել, դրականի
յանգեցնել ընթերցանութեան
իներցիան, այնուամենայնիւ, մէկ
շնչով կարդացող, ներաշխարհ
տակնուվրայ անող, բարի յիշողու-
թիւններով պարուրուած, ընթեր-
ցանութեան արժանի ժողովածու է:
Գրիչը թող շարունակի ար-
թուն մնալ: Գողորիկ ժպիտը էլ
թող ուղեկցի քեզ ամենուրէք: Դու
հպարտ քայլելու իրաւունքը վաս-
տակել ես արդէն: Ետ նայելիս չեն
ամաչի՝ աշխարհում ստեղծել ես քո
ներաշխարհը, անձեռնմելի պահիր
այն:

Ես բաց նամակս պատուախնդ-
րօրէն ուղղեցի քեզ: Անանուն չէ այն

Բանաստեղծական շնորհակա-
լութեամբ կրտսեր գրչեղբայրս Գա-

րոշ Հարեանց:
Ողջ լեր:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԷՆԹԱ)

GLOBACAST SATELLITE

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎԱՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԳԷՈՐԳ Ս. ՅՈՎՆԱՆԵԱՆ 1923-2009 ՄԱՀՈՒՄ ԲԱՌԱՍՈՒՆԵՐԻ ԱՌԻՈՎ

ԴՈՒՏ. ԶԱԽԷՆ Ա. ԳԶՆՑ.
ԱՐՁՈՒՄ ԱՆՆԵԱՆ

Ազգային բարերար Գեորգ Յովնանեանի մահը անցնող Սեպտեմբերի 24-ին շատ ծանր ճնշեց իր բարեպաշտ ու անուանի ընտանիքին, Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւելեան Թեմին, ու յատկապէս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վրայ: Իր իմաստուն ու յարատեւ աշխատանքով Պրն. Գեորգ Յովնանեան իր ճարտարարուեստի եւ շինարարութեան բացառիկ կարողութիւններով օժտուած, եղաւ հարգատար յաջորդը 20-րդ դարու մեր ազգային բարերարներուն՝ Ալեքսանդր Մանթաշեանի, Պողոս Նուպարի եւ Ալեք Մանուկեանի, որոնց պատուաբեր ժառանգը ինք պանծացուց գործքով, եւ երբեք խօսքով գորարտասանելու կարիքն անգամ չունեցաւ: Գործին հաւատացող քիչ կը խօսի, վասնզի գործը ինքնին կը վկայէ ամէն ինչ:

Ի Տէր հանգուցեալ Գեորգ Յովնանեան հայրենասէր մարդու եւ կրօնասէր հաւատացեալի բազմաշնորհ ձիրքերով ապրեցաւ ու ապրեցուց իր բազմանդամ ընտանիքն ու հայրենի ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Յովնանեան, երէց որդին Ստեփան Յովնանեանի ու եղբայրը ազգովին յայտնի ու յարգելի իր երեք եղբայրներուն եւ քրոջ, եղաւ Ամերիկեան ճարտարարուեստի հսկաներէն՝ ըլլալով երկրի շինարարական եւ կալուածատիրական առաջնորդող միջազգային դէմքերէն մին, պատիւ բերելով Ամերիկայի, Հայաստանի, իր ազգակիցներուն, ու հայուն անունը բարձր ու վճիտ պահելով ինչպէս եղան իր անձն ու աննկուն նկարագիրը:

Գեորգ Յովնանեանի բազմերես արժանիքներն ու ճակտի քրտինքով շահած եւ շահարկած «Գեորգ Յովնանեան Շինարարական Ընկերութիւն»-ը հսկայ եւ որակաւոր դարձաւ սկիզբէն ու մնաց այդպիսին՝ միշտ իր խաղաղասէր, ժպտադէմ, ինքնավստահ եւ իմաստուն աշխույժութեանը շնորհիւ, գայն դարձնելով միանգամայն աչքն ու ականջը Ամերիկեան բազմամիլիոն արժէթուղթերու տէրերուն: Ան պատուով միայն շահեցաւ ու ներքին գոհունակութեամբ «շինարարը» եղաւ նաեւ հայ ազգային կենսական կարիքներու՝ Նիւ Ճրզիի Ս. Ստեփանոս Հայց. Եկեղեցւոյ շինութեան, Ս. Էջմիածնի Գեորգեան ձեմարանի վերանորոգութեան, Նիւ Եորքի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչի պատկառելի շէնքին, եւ բազմաթիւ բնակարաններու կառուցման Հայաստանի մէջ՝ մեծ երկրաշարժին հետեւող դժբախտ տարիներուն:

Իր ժամանակին մարդը եղաւ ան, ինչպէս եղան վերեւ յիշուած մեծ բարերարները՝ Մանթաշեան, Պողոս Նուպար եւ Ալեք Մանուկեան, երբ Հայրենիքը կը տուապէս մեծ երկրաշարժի արհաւիրքներէն, ու շուտով անկախութեան տիրանալով, կը մատուէր թաքուն եղելութեանց: Յովնանեանի սիրտը դարձեալ «իր գանձը կը գտնէր», համաձայն մեր Տիրոջ Յիսուսի պատուէրին՝ թէ «ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին»: Գեորգ

Յովնանեան անտարակոյս իր սիրտը դրաւ իսկական գանձերուն մէջ՝ ազգային եւ եկեղեցեկան, բարեսիրական ու դաստիարակչական, որոնց մէջ տրոփեց իր սիրտը ու կեանք ստացաւ անոնցմէ, Աստուծոյ շնորհքին արժանի դառնալով ու տասնամեակ մը աւելիով իր բարերար կեանքը ազգին նուիրելով:

Անցնող յիսնամեակին, Արեւելեան Թեմի երէց հոգեւորականներու եւ ազգասէրներու հայեացքին ներքեւ Գեորգ Յովնանեանի անձն ու գործունէութիւնը խօսուն եւ վկայակոչող յուշարձան մը հանդիսացան: Իր անձին մէջ, որպէս մեր օրերուն մեծ բարերարը հայ ազգային, կրօնական եւ քաղաքական տեսադաշտերուն մէջ տիրող կարիքներուն, մեր սերունդի հայորդիներուն համար ճշմարիտ ու գերազանց դիմաստուէրը ցոլացուց իր լիիրաւ իմաստով, եւ ո՛չ թէ յետ մահու երախտիքի մը հաշույն: «Գերագանց», այս պարագային կը յատկանշէ Գերագանց իր գլխադիր արձանագրութեամբ, արձանուած իր համեստ ու ցլեանս պատուաբեր պատուանդանին վրայ:

Գեորգ Յովնանեանի մահուամբ լուրջութիւնը չէ որ պիտի տիրապետէ, այլ բացումը ա՛յն «զպրոցին» որ եղաւ իր բովանդակ կեանքը, արժէքներու դասաւորմամբ եւ հայակերտ հաստատութիւններու նուիրաբերմամբ: Ան եղաւ նաեւ հոգածու հայրը Ամերիկահայ Թեմի Յովնանեանի Հայաստանի Օգնութեան Հիմնադրամին որպէս անոր իմաստուն Ատենապետը՝ երկար տարիներ: Իրաքէն գաղթած եւ Ամերիկայի մէջ իմաստնացած, կուռ նկարագրի տէր Գեորգ Յովնանեան եղաւ պարծանքը ամերիկահայ գաղութին՝ Ատլանտեանի ափերէն մինչեւ Խաղաղականի ափերը: Զինք մօտէն ճանչցողներ, անթիւ անհամար, միայն յարգանք ու սէր տածեցին իր եւ իրեն կողակից Տիկին Սիրվարդ Յովնանեանի որոնց երգիքին տակ կաթողիկոսներ ու ազգային ներկայացուցիչներ ներշնչում գտան, հայ ազգին բազկերակը լսեցին, բարերարութիւններ կատարեցին՝ հետեւելով իր բարի եւ արի օրինակին:

Գեորգ Յովնանեանի մահուան քառասունքին առիթով մեր աղօթքն առ Աստուած պիտի ըլլայ գոհունակութեամբ լեցուն եւ միաթափարութեամբ գեղուն աղերասնք որ Գեորգի քաջարի հոգին մշտնջենի լոյսերու մէջ հանգչի, եւ Ս. Հոգիի միաթափարութիւնը պարուրէ իր սիրելի ընտանիքին բոլոր անդամները:

REQUEST FOR PROPOSALS
(RFP #7524)
WIRELESS CAMERA
SURVEILLANCE SYSTEM
The Housing Authority of
the City of Los Angeles invites
proposals from qualified vendors
to provide a fully developed wireless
camera surveillance systems.
Copy of the RFP may be obtained
beginning November 9, 2009 via
www.hacla.org/ps website or call
(213) 252-5405 or 252-1832. Proposals
will be accepted until 2:00 P.M.,
on December 9, 2009
11/19, 11/26/09
CNS-1732867#
MASSIS WEEKLY

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ՝ «ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շարունակուած էջ 8-էն

տարութեամբ՝ վարդուհի Գոճայեան, Շուշանի վարժ դերով՝ Սօսի վարժապետեան եւ զանազան դերերով խաղարկողները:

«Քաղաքավարութեան վնասները» թատերախաղի նիւթի ընտրութիւնը յաջող նախաձեռնութիւն մը եղած է բեմադրիչին կողմէ, այն իմաստով, որ շնորհիւ այդ ընտրութեամբ, հայ նոր սերունդին պիտի ներկայացուէր եւ ծանօթացուէր հայ թատերական ստեղծագործական գրականութիւնը, հայ թատերագիրները, որոնք կարծուածէն աւելի թիւ կը կազմեն: Որքան լաւ պիտի ըլլար, որ օտար թատերագիրներու շարքին նաեւ մեր թատերագիրներու գործերը յաճախակի բեմադրուին առ ի ծանօթացում եւ տարածում՝ մեր այլասերող գաղթօճախներէ ներս, ինչ որ պիտի քաջալերէ հայ նոր սերունդը, որ գործնապէս իր մասնակցութիւնը բերէ հայ թատե-

րական կեանքին, սատար հանդիսանալով հայապահպանման սրբազան առաքելութեան:

Թիւով աւելի քան 20 տաղանդաշատ, վարժ եւ խոստումնալից դերասաններու մասնակցութեամբ ներկայացուած, աւելի քան 100 տարի առաջ գրուած ներկայ գործը, այսօր հարիւր տարի ետք, կը պահէր իր այժմէականութիւնը, կը պահէր անոր ախուր հիմք ծառայող ընկերային, բարոյական եւ հաւաքական կեանքը, իր աւանդական նկարագրէն պարպող յոռի օտարամուտ բարքերը, որոնք միշտ ենթակայ կը մնային սրբագրութեան:

Յաջող ձեռնարկ մը արդարեւ, որուն համար կը շնորհաւորենք բոլոր դերասան-դերասանուհիները հաւասարապէս: Կ'ողջունենք վաստակաշատ դերասան-բեմադրիչ Գրիգոր Սաթամեանը, թէքնիք անձնակազմը եւ «Արտաւագ» թատերախումբի վարչութիւնը: Վարձքերնիդ կատար:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 13-էն

ցին ու կրնան նպաստել մեր ինքնութեան ամրակայման: (Յ. Տէր Գալիթեանի ելոյթի ամբողջութիւնը տեսնել կողքի սիւնակը):

Հանդիսութեան ընթացքին պատուոյ յուշատախտակով պարգեւատրուեցան օրուան նախագահ տէր եւ տիկ. Սարգիս Պալեան, Ն.Մ.Մ.Մ.ի եւ ընհանրապէս հայ մշակույթին ու հասարակական կեանքին իրենց բերած նիւթական թէ բարոյական նպաստներուն համար: Պարգեւատրուեցան նաեւ ընկ. Գրիգոր Մուշեան եւ ընկ. Գրիգոր Ղարիպեան (յետ մահու), Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան Պատուոյ Գիրքով, իրենց տարիներու անսակարկ նուիրումին համար: 30-ամեակի կարկանդակը հատուեցաւ օրուան նախագահ պրն. Սարգիս

Պալեանի, Թորոնթոյի Ն.Մ.Մ.Մ.ի հիմնադիրներէն եւ ամբողջ 30 տարիներ անոր մղիչ ուժը հանդիսացող ընկ. Պետրոս Մուշեանի եւ օրուան բանախօսին կողմէ:

Գեղարուեստական յայտագրով ելոյթ ունեցաւ Լոնտոնէն յատուկ ժամանած հայրենի երգիչ Սամուէլ Վարդանեան, որ էսթրատային, ժողովրդական, աշուղական թէ յեղափոխական երգերու կատարումով խանդավառեց ներկաները մինչեւ առաւօտեան առաջին ժամերը:

Այս յիշատակելի հանդիսութիւնն ու երեկոն կարելի պիտի չըլլար իրականացնել՝ առանց Ն.Մ.Մ.Մ.ի վարչութեան եւ անոր աշխատանքներուն սատարող նուիրեալներուն, որոնց բոլորի ջանքերը յոյժ գնահատելի են:

Թղթակից

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ՈՒԺԸ

Շարունակուած էջ 13-էն

հայրս, Լիբանանէն եկաւ հաստատուելու իմ մօտ: Առաջարկեց որ տան շուրջի հողերը մշակենք եւ պտղատու ծառեր տնկենք: Երկար ամիսներու աշխատութիւնէր, որ մեծ սիրով ու կորովով կը կատարէր հակառակ 82 տարեկան հասակին: Ծաբաթավերջերուն կ'աշխատէինք միասին ու կը հիանայի իր մարտունակութեան վրայ: Օրին մէկը, երբ ծանր աշխատանքէ դադար առած կը հանգստանայինք, իրեն ըսի. «Հայրիկ, անհամբեր եմ, ե՞րբ պիտի այս ծառերը մեծնան ու պտուղ տան, որ երկուքս ալ անոնց շուքին տակ վայելենք մեր աշխատանքի արդիւնքը»: Հայրս անմիջապէս կուհեղով մտահոգութիւնս, պատասխանեց «Ես թերեւս չտեսնեմ այդ օրը, բայց վստահ եղիր որ այսօրու ընէ իսկ իմ սիրտը

ուրախ է այդ օրուան տեսիլքով»: Իմ մաղթանքն է, որ ամէնքս գիտակից մեր արմատներուն եւ ինքնութեան, մեր կենսաբեր արժեւորող եւ իմաստաւորող տեսիլքներ ունենանք եւ ուրախ սրտերով լծուինք անոնց իրականացման աշխատանքին: Այս գիտակցութիւնով մենք անգամի մը համար եւս վարձահատուց կ'ըլլանք Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադիրներուն եւ նուիրեալներուն, ինչպէս նաեւ հայ մշակույթին բոլոր ծառայողներուն հանդէպ: Կը խոնարհեցնենք մեր գլուխները բոլոր այն նուիրեալներուն առջեւ, որոնք հայ մշակութային արժէքներու ստեղծումով թէ փոխանցումով, մեզի կը պարգեւեն բազմամշակույթ այս աշխարհին մէջ, մեր հայու գլուխները բարձր բռնելու հպարտութիւնը:

Վարձքերնի կատար: Պատիւ արժանաւորաց:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107
(626) 398-0506

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԻՏՃԵՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 7-էն

Transparency International կազմակերպութիւնը առողջապահութեան բնագաւառում 2006թ. կատարել է լրջագոյն հետազոտութիւններ, ըստ որի՝ բուժօգնութեան վրայ պետականորէն կատարուող ծախսերի եւ տրուող խոստումների բացարձակ անհամապատասխանութիւնն է պատճառը, որ կոռուպցիոն ռիսկերի տեսանկիւնից համակարգը մշտապէս գտնուում է երկրորդ-երրորդ տեղում:

- Այս իրավիճակից դուրս գալու առաջարկ ունէք:

- Ժողովրդի հետ պէտք է անկեղծ լինել: Ես կ'առաջարկեի՝ առողջապահութեան համակարգի պիւտճէի ձեւաւորման սկզբունքը փոխել. պետութիւնը պէտք է գտնի այն մարդուն, որի բուժօգնութիւնը ինքը պէտք է փոխառուցի: Մինչդեռ մեր առողջապահութեան պիւտճէի ձեւաւորման սկզբունքը դեռեւս 96-ից ըստ սոցիալական խմբերի եւ հիւանդութեան տեսակների է: Նման մօտեցում կա նաեւ Ռուսաստանում: Կարծում եմ, առողջապահութեան պիւտճէի ձեւաւորման հիմքում պէտք է դրուեն ոչ թէ հիւանդութեան տեսակները, այլ, բացառապէս, սոցիալական խմբերը, մեր դէպքում՝ ամենակարիքաւորները: Այսինքն՝ բուժել է պէտք ոչ թէ հիւանդութիւնը, այլ հիւանդին: Ներդնենք այդ պիւտճէն միայն սոցիալապէս անապահով՝ շուրջ 500 հազար մեր բնակիչների բուժօգնութեան համար, որոնց 10-15%-ն է հիւանդանոցային բուժօգնութեան կարիք գոյում: Այսօր պետութիւնը 200 հազար հիւանդի ծախսեր է հոգում՝ կիսատ-պոստ եւ անարդիւնաւէտ: Մինչդեռ այս դէպքում կրկնակի եւ ավելի փոքր թուով, բայց իսկապէս կարիքաւոր բնակիչներ կը ստանան լիարժէք բուժօգնութիւն: Նաեւ կոռուպցիոն ռիսկերը կը նուազեն:

- Կարծում ե՞ք՝ կարա՞վարուծուի այս մասին գլխի չի՞ ընկնում: Իշխանութիւններն «աշխատում» են ողջ ազգաբնակչութեան՝ որպէս պոտենցիալ ընտրագնաւորութիւն: Իսկ Ձեր տարբերակում՝ Ձեր նշած 500 հազարի:

- Գուցէ:
- Իսկ համակարգը բարելաւելու այլ ճանապարհներ կա՞ն:

- Չկայ աշխարհում մի պետութիւն, որտեղ բժշկութիւնն անվճար է: Եւ կան համակարգեր, որոնք վաղուց գործում են քաղաքակիրթ աշխարհում՝ մասնաւորապէս, պարտադիր բժշկական ապահովագրութիւնը: Դրա համար պոպուլիզմ պէտք է. դրա համար սոցիալական արդարութեան հիմքեր է հարկաւոր դնել, երբ աշխատող վճարում է գործազուրկի համար, հարուստը՝ աղքատի եւ առողջը՝ հիւանդի: Լիբերալ պետութիւններն այսօր առաձեւ քան ներգրաւուած են սոցիալական ապահովագրութեան խնդիրներում: Ընդ որում՝ նոյն միտումներն են կենտրոնական Եւրոպայի ու ԱՊՀ երկրներում: Դրանցում էլ, անշուշտ, լուծուած չեն առողջապահական բոլոր խնդիր-

ները, բայց նաեւ այնպիսի անելանելի վիճակ է, ինչպիսին Հայաստանում է: Պարտադիր բժշկական ապահովագրութեան հարիւրամեայ փորձ կա, իսկ մենք ջայլամային քաղաքականութիւն ենք վարում: Միաժամանակ ուշադրութիւն եմ ուղղում հրաւիրել այն պատմական իրողութեան վրայ, որ պարտադիր բժշկական ապահովագրութեան ծագումնաբանութիւնը պայմանաւորուած է եղել տնտեսական ու սոցիալական բարդագոյն իրավիճակում բնակչութեան առողջութեան կարիքները առաւելագոյնս հոգալու արդիւնաւէտ ու սոցիալապէս պաշտպանիչ համակարգի ներդրումը:

- Իսկ գուցէ խորհրդային համակարգից ստացած ժառանգութեան բե՞ռն է ծանր, որը ոչ մի կերպ չենք կարողանում մեր ուսերից թօթափել՝ անվճար բուժօգնութեան գաղափար, գերուճացումը համակարգի, որն այսօրուայ իրողութիւններին չի համապատասխանում:

- Մեր համակարգն իսկապէս ուռճացուած է: Կրկնակի ավելի հզորութիւններ ունենք՝ շէնք-շինութիւններով ու սպասարկող աշխատակազմով: Այդ բեռը նստած է հարկատուի ուսերին: Առնուազն կիսով չափ պէտք է համակարգը «բեռնաթափել»: Հայաստանը ստրատեգիական նշանակութիւն ունէր Խորհրդային Միութեան համար, եւ հաշուարկուած էր, որ եթէ եւրոպական մասում, Աստուած մի արացէ, պատերազմական գործողութիւններ ծաւալուէին, մեր բուժ-հաստատութիւնները դառնալու էին հիւանդանոցներ, ինչպէս եղաւ Հայրենական պատերազմի ժամանակ, ուստի այսքան առողջապահական հաստատութիւններն անգամ քիչ էին համարուած: Մինչդեռ այս սակայ շինութիւնների պահպանման ծախսերն անելի գումարներ են կազմում: Գիտե՞ք՝ պարագոքսը որն է՝ քաղաքացուն ասում են, որ նա բժշկի ընտրութեան ազատ հնարաւորութիւն ունի: Քաղաքացին էլ որտեղ ծանօթ ունի, այնտեղ գրանցուած է: Այս պոլիկլինիկայում հինգ հիւանդ է գրանցուած, միւսում՝ տասը, իսկ շէնքը, որ նախատեսուած է մի քանի հարիւր հիւանդների սպասարկման համար, պահպանում է: Արդիւնաւէտ գործող համակարգ է հարկաւոր, որպէսզի պետութեան ներդրած իւրաքանչիւր դրամը արդիւնաւէտ չէ, ուղղւած է՝ պիւտճէն տասնապատկէք: Ոչինչ չի փոխուելու, եթէ օպտիմալացման ծրագիր չիրականացուի: Ելի կան երկրներ, որոնք նոյն ժառանգութիւնն են ստացել խորհրդային երկրից, բայց անկախացել են եւ, իրատեսօրէն գնահատելով իրենց երկրի հնարաւորութիւնները, արդիականացրել համակարգը:

Էսթոնիայում մէկ գիշերուայ մէջ քսանութի հիւանդանոց փակուել է, մինչդեռ մերձբալթեան առողջապահական համակարգն այսօր հասնում է եւրոպական երկրների մակարդակին: Մեզ մօտ բուժաշխատող մէկ հիւանդի բուժման համար անհարկաւոր է մի քանի անգամ ավելի քան սարատապատեան գոյամարտի նախօրեակին: Թերեւս նոյնիսկ ավելին է: Պարզապէս փոխած է իր հանդերձանքը: Եւ գայլը խաղաղութեան աղաւնիի կեղծ թելերով մար ստանում է նախատեսուած գումարի չնչին տոկոսը միայն, մնացածը գնում է հսկայական հիմնարկի պահպանութեան ծախսերին՝ ջեռուցման, էլեկտրաէներգիայի եւ ջրամատակարարման խնդիրներին, սպասարկող աշխատակազմին:

- Բնակչութեան թուաքանակ եւ բուժաշխատողներ յարաբերակցութիւնը ինչպիսիս է մեզ մօտ:

- Երկու անգամ ավելին է, քան այսօր եւրոպական երկրներում ընդունուած ցուցանիշն է: Եթէ այլ երկրներում տասը հազար բնակչին տասներեք-տասնչորսից մինչեւ քսան բժիշկ է հասնում, ապա մեզ մօտ այդ թիւը երեսուներեք-քառասուն է: Եւ բաւական չէ՝ բժիշկներ են պատրաստուած բժշկական համալսարանում, արդեն բազմաթիւ ոչ պետական բուհեր եւ ներգրաւուած են վաղը աշխատանք չունեցող բժշկական կադրերի պատրաստմանը: Մինչդեռ անհրաժեշտ է կադրային ռեսուրսների մասնագիտական որակի բարձրացման առաւել արդիւնաւէտ ու ժամանա-

ԲՈՒՒՆՑՔԸ ԵՒ ՀԻՆԳ ՄԱՏՆԵՐԸ

Շարունակուած էջ 5-էն

կան գէթ ներկայ փորձանաւոր ճգնաժամի տեսողութեան պարտին փոխադարձաբար գորացնել զիրար՝ ազգովին ավելի ինքնավստահ ու ժերով ու միասնական ազդու ճակատով դիմակայելու համար մեծպետական դժուար դիմադրելի ճնշումները, ինչպէս նաեւ թուրքազերի տեւական կոցահարումներն ու այլատեսակ թակարդներու վարպետորդի լարումները:

Տարածաշրջանի քաղաքական բարդ եւ անկայուն իրադրութեան թելադրած ողջախոհութեան հրամայականին տրամաբանօրէն կը հետեւի ներքին բոլոր ուժերու ամբողջական ամրապնդման բացարձակ անհրաժեշտութիւնը: Ատով, կողմերէն որեւէ մէկը ըստ էութեան սկզբունքային գիշում կատարած չ'ըլլար միւսին, այլ պարզապէս կը հաստատէ թէ բուռնցքը ավելի հզոր է քան հինգ մատներու գումարը՝ առանձին-առանձին առուած: Ազգովին մեզի սպառնացող բնաջնջման վտանգը ներկայիս հաւանաբար նուազ մահաբեր չէ քան սարատապատեան գոյամարտի նախօրեակին: Թերեւս նոյնիսկ ավելին է: Պարզապէս փոխած է իր հանդերձանքը: Եւ գայլը խաղաղութեան աղաւնիի կեղծ թելերով

կ'ուզէ մուտք գործել մեր համեստ բակէն ներս:

Բուռնցքաւորման անհրաժեշտութիւնը հրատապ է եւ անյետաձգելի: Կարելի է իրապաշտօրէն ծաւալել եթէ ո'չ համատեղուած, ապա գէթ ամբողջ աշխարհի հայութեան մակարդակով համակարգուած՝ փրկութեան համահայկական շարժում եւ աշխատանք որուն մասնակցին բոլոր կողմերն անխտիր, ուր հայրենակերտումի եւ արդիականացման գործին լծուած ըլլան գործող իշխանութիւնն ու ամբողջ ընդդիմութիւնը, եւ որու նեցուկ կանգնին արհ. թ. քահայ. քաղաքական ավանդական կուսակցութիւններն ու բոլոր կազմակերպութիւնները: Ու բոլորն ալ իրենց կարելի լաւագոյնը մոծեն հայրենիքի հզորացման եւ առողջ գարգացման էապէս ընդմիջուած աշխատանքներուն՝ կանխելու համար գալիք ընդհանրապէս փոթորիկներու աղետալի հետեւանքները:

Նման արդիւնաւէտ համակարգումի համար մասնակից կողմերէն չի պահանջուիր քաղաքական անգոյ, անիրապաշտ մաքրակրօնութիւնը: Օր ցերեկով երազատեսութեան ու մանթիզմի ժամանակներն անցած են: Ակնկալուածը իրատեսական նուազագոյնն է ու կարելի՛ լաւագոյնը:

կակից համակարգի ներդրում, կադրերի օպտիմալացում:

- Առանց այդ էլ գործազուրկութեան հսկայական բանակ ունենք, գուցէ իշխանութիւնները խուսափու՞մ են դժգոհութեան ալիքից:

- Բայց կա՞յ այլ ճանապարհ: Համակարգից դուրս մնացածներին կարելի է սոցիալական աջակցութեան ծրագրերում ներգրաւել, վերջապէս նրանց արժանավայել փոխհատուցել ու վերապրոֆիլակտորել՝ ըստ հնարաւորութեան ու անհրաժեշտութեան:

- Եւ, այնուամենայնիւ, ի՞նչը մեզ ամենաշատը չի բաւականացնում առողջապահութիւնը «առողջացնելու» համար:

- Ցանկացած բնագաւառում, այդ թւում՝ առողջապահութեան համակարգում, առաջընթաց եւ զարգացումներ կարող են լինել երեք պայմանների առկայութեան դէպքում՝ ֆինանսական միջոցներ, մասնագիտական ներուժ եւ, ամենակարեւորը, քաղաքական կամք, որն ամենաշատը չի բաւականացնում մեր իշխանութիւններին:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԼԵՆԱ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ մահուան առթիւ Հայաստանաբնակ իր հարազատները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն եւ կը վշտակցին հանգուցեալի Կլէնտէյլաբնակ հարազատներուն ու համայն պարագաներուն:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

Նոր Տարուայ Երկր Դիմաւորում Քաջ Սալարի Հետ

Kach Nazar's New Year's Eve Celebration


December 31, 2009

8:00pm - 3:00am

**UNIVERSAL
HILTON HOTEL**

555 Universal Hollywood Drive
Universal City, CA 91608

Մասնակցութեամբ



ԲՈՒՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՍԻՐԻԱԾ ԵՐԳԻՋՆԵՐ

ՅԱՐՈՒԹ ՓԱՓՈՒԻՔՇԵԱՆ - ՍԱՐՔ

ԵՒ ARIN DJ

**5 COURSE FILET MIGNON DINNER (MIDNIGHT COLD CUT BUFFET AND CHAMPAGNE)
\$150 PER PERSON KIDS 3-10 \$75.00**



For Tickets and Info Call:

Unievrsal Hilton Hotel818.506.2500

Chaterian World Video.....818.242.6928

Ani Grocery.....818.241.7229

Pacific Video.....818.956.6643

Yerevan Printing.....818.246.2070

Armen Grocery.....818.500.9005

Shirak Grocery (La Crescenta) 818.249.3314

Kach Nazar818.246.0125